
BIBLIOTHÈQUE NUBAR
N°
COTE
U.G.A.B

2. [illegible] E. Mott.
[illegible]

[illegible] Chemistry [illegible]
[illegible]

1709-

ՀԱՄԵՄՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

Հոգ. Թերթերեանց
Հանդուցեալ



ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՍ ՎԱՆՔԻՆ

1848 – ԹՎԱԿԱՆ

Գ. 8826

3514 ob 9(47.925)

12004

3599-51

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՄԵՐ առջի հանած ազգային պատմութիւններնուս համառօտ գաղափարը իր գեղեցիկ յատկութիւններուն ու օգտակարութիւններուն հետ մէկտեղ թերևս այն թերութիւնն ալ ունենայ, որ ոչ միայն գպրատան ազգց գաղառութեան համար, այլ և առհասարակ մեծերուն ընթերցմանը համար ալ շինուած ըլլալով, մանր ազգց ստրմէրու շատ յարմար չարունայ։ Որովհետև յայտնի է որ ազգց համար շինուածը պիտի ըլլայ պարզ և դիւրին ոճով, կարճառօտ պատասխաններով ու քիչ և համառօտ խորհրդածութիւններով. իսկ մեծերու համար շինողը որչափ կարելի է ընդարձակ ոճով պէտք է ընէ պատմական մասերը, խորհրդածութիւնները յաճախ առանց կարիւոր տեղերը զանց առնելու, և ջանայ միշտ որ ազգին ու իր պատմութիւնը

ոգի մը տայ՝ ընթերցողին եռանդը վառելու համար։ Այս երկու տեսակ պատմութեան պայմաններէն որչափ որ հարկաւոր, բայց միանգամայն գժուարին ըլլալով մի և նոյն դասատեսութեան մէջ բովանդակելը, սոփպուեցանք ուրիշ կերպով մը այս երկու տեսակին ալ կատարելութիւններէն տալ բան կարի։ Այս ինքն երկու հատոր ձեւացուցինք՝ որոնց մէկը ըլլայ մանր տղոց տրվելու համար, իսկ մէկալը քիչ մը զարգացելոց կամ մեծերու ալ ընթերցման համար։ Առջի հատորիկին մէջ խիստ քիչ ըրինք խորհրդածութիւններէն ու ամենահամառօտ ոճ բռնեցինք, ապահով ըլլալով որ ազգասիրութեան հոգին պզտիկուց տղու մը սիրտը վառուելէն ետքը՝ այս համառօտավ գոհ չըլլար, այլ ընդարձակին ալ կարդալու փոյթ կ'ընէ իր ազգասիրական եռանդը գոհ ընելու համար։ Կը յուսանք որ այս կերպով ինչ օգուտ որ կը դիտենք՝ քաղէն եթէ աշակերտք և եթէ վարժապետք այս համառօտ ազգային պատմութիւնեներին։

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԻՐԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԳԱՍ Ա.

Հայկէն մինչեւ Թիւրամ Արամ։

ՀՐՑ. Ո՞ՎՔ Հայոց ազգը ուսկից առաջ եկած է.

ՊԽ. Նոյ նահապետին Յաբեթ որդիէն։

Հ. Ո՞վ եղաւ մեր ազգին նահապետը.

Պ. Հայկ, որ էր Թորգոմայ որդին. Թորգոմն ալ Գամերայ, Գամերն ալ Յաբեթայ։

Հ. Ի՞նչպէս մեր ազգին նահապետ եղաւ Հայկ.

Պ. Իր ազգատոհմին վրայ տէր և գլուխ ըլլալով, և զանոնք իր անուամբը Հայք անուանելով. որոնցմէ մենք ալ ինչած ենք։

Հ. Երբ սկսաւ մեր ազգին տէրութիւնը.
Պ. Ամենայապէս ջրհեղեղէն քիչ մը է ասքը։

Հ. Ի՞նչ կերպով սկսաւ Հայկ իր տէրութիւնը.
Պ. Երբոր Բաբելոն գացող և աշտարակը շինող մարդկանց լեզուն խառնուեցաւ, և ազգերը պիսի ցրուէին, Բէլ ուզեց ամենուն վրայ բռնութեամբ իշխել ու Աստուծոյ պէս պաշտուիլ. Հայկ ալ առ բանիս չգիտնացաւ, ու Հայաստան դարձաւ իրեք հարիւր կարիճներովը, որ էին իրեն որդիքը, թոռունքը, և անոնց ընկերացած հաւատարիմ մարդիկներ (2346)։

Հ. Բէլ երբոր առ բանս լսեց ի՞նչ ըրաւ.
Պ. Հպարտութեամբ պատգամ խրկեց Հայկայ որ գայ հնազանդի իրեն, թէ չէ անով տեղով զինքը թրէ կ'անցընէ։

Հ. Հայկ առ բաներս լսելով հնազանդեցա՞ Բէլայ.
Պ. Չէ. հապա իրեն կարիճ տղաքներովը, ծառաներովը և ուրիշ հաւատարիմ մարդիկներով Բէլայ անհամար բազմութիւնը գէմ ելաւ, որոնք եկեր էին իր վրայ։

Հ. Ի՞նչպէս պատերազմեցան Հայկն ու Բէլը.
Պ. Նախ Հայկ յաղթեց Բէլայ զօրքերուն. վերջը երբոր Բէլ ետ կը քաշուէր քիչ մը զօրքով, Հայկ մէկէն վրան վազեց զարկաւ

նեռոմը, ու հոն ապաստան փռեց ամբարտաւան հոկան Ղառուծոյ և մարդկութիւն թշնամին։

Հ. Հայկ թէ ինչ մարմին ունէր։

Պ. Զմեռեալ տարով տարաւ Հայաստանի հարք ըստուած երկիրը, ու ելքի մը վրայ թագեց, ուզելով որ ամէնքն ալ տեսնեն և իմանան ամբարտաւան մարդուն վիճակը. և իրեն ալ աշխարհքիս ըրած բարիքը։

Հ. Հայկ թէ ապաստանէն ետքը ինչ ըրաւ, ու որչափ ապրեցաւ.

Պ. Ուզելով խնայողներ իր արդարատէր և անաչխարհական ոգին՝ թշնամին հալածելէն ետքը դարձաւ Հայաստան եկաւ. քաղաքներ շինեց ու բարեկարգութիւններ ըրաւ ու 400 տարի չափ ապրելէն ետքը խաղաղութեամբ մեռաւ (2265)։

Հ. Ինչ բնութիւն և ինչ ձիրքեր ունէր Հայկ.

Պ. Մարմնով կարիճ մարդ էր, մեծահասակ և գեղեցիկ, գառոյ մազերով, կարմիր երեսով, վառվռուն աչքերով. ձեռքով ալ շատ ճարտիկ ու արագաշարժ. իսկ մտքի՝ բարակամիտ, հեռատես, աշխարհաշէն և անվախ սրտով։

Հ. Հայկայ առեն ինչ մասնաւոր բան պատահեցաւ Հայաստանի մէջ.

Պ. Եոյ 950 տարուան վախճանեցաւ, ու

թաղուեցաւ ինչպէս կ'ըսուի Նախիջևան քաղաքը. նոյնպէս Նոյեմբարա՝ Նոյայ կին ալ թաղուեցաւ Մարանդ գաւառը։

Հ. Հայկայ տեղը ովքա՞ն էր.
Պ. Արմենակ։

Հ. Ո՞վ է Արմենակ.
Պ. Հայկայ քաջ և հայրենասէր անդրանիկ որդին որ իրեն տեղը յաջորդեց։

Հ. Արմենակ ի՞նչ գործ ըրաւ իր հայրենասիրութիւնը վայել.
Պ. Իր Խոռ և Մանուազ եղբայրները հարք գաւառը թողուց ու ինքը արևելեան կողմերը գնաց, հոն տեղուանքն ալ շէնցուց։

Հ. Արմենակայ մէկալ եղբարքը ի՞նչ եղան.
Պ. Երկու եղբարքն ալ անանկ բազմացան, որ հազարաւոր տարի ցեղերնին դիմացաւ իրենց անուանովը Խորխոռունիք ու Մանուազեանք ըսուելով։ Նոյնպէս Բազ Արմենակայ որդւոյն ցեղն ալ իր անուանովը Բազնունիք ըսուեցաւ։

Հ. Արմենակայ ովքա՞ն յաջորդեց.
Պ. Արամայիս իր որդին, որ Արմաւիր քաղաքը շինեց Երասխ գետին քով (1975)։

Հ. Ո՞վ էր Շարա և վրան ի՞նչ գիտելիք կայ.
Պ. Շարա Արամայիսի որդւոց մէկն է որ

շատ կերուխուռմ կը սիրէր, հայրն ալ զինքը բարեբեր երկիր մը խաւրեց որ իր անունովը Շիրակ կոչուեցաւ։

Հ. Աբրամայիսին տեղը ով անցաւ.

Պ. Ամասիա իրեն որդին, որ իր անունովը՝ Մասիս անուանեց Աբարատ լեռը։

Հ. Ամասիայի որդւոց վրայ ինչ գիտէք կայ.

Պ. Ամասիա իրեք տղայ ունէր Փառոս, Ցոլակ և Գեղամ. առջի երկուքին համար մէյմէկ քաղաք շինեց որ անունց անունովը Փառասատ և Ցոլակերտ ըսուեցան. իսկ երրորդը Գեղամ իր տեղը յաջորդեց։

Հ. Գեղամայ վրայ ինչ կը պատմուի.

Պ. Քանի մը տարի իշխեցին եղբը, յանձնեց տիրութիւնը իր Հարմա տղուն, ու ինքը Սևան ծովին եզերքները բնակելով ան տեղը իր անունովը կոչեց Գեղարքունիք կամ Գեղամայ արքունիք ու ծովն ալ Գեղամայ ծով։

Հ. Սիսակ Գեղամայ որդւոյն վրայ ինչ գիտէք կայ.

Պ. Սիսակ իր քաղցր նայուածքին և խօսուածքին համար Աղու ըսուեցաւ. ասոր բնակած տեղին անունը Սիսական ըսուեցաւ կամ Սիւնիք. իսկ իրեն տիրած տարր երկիրները՝ Աղուանք։

Հ. Ո՞վ էր Հարմա և իր վրայ ինչ մեծաւոր գործք մը կը պատմուի.

Պ. Գեղամայ որդին էր. ասոր առնելը սկսան թշնամիք Հայաստանի վրայ վազելու սիրել, որոնք որ Հայկայ և իրեն որդւոցը քաջութեան գործքերը լսելով առաջ վախցեր ու թուլցեր էին. բայց առնելն անցնելով մոռցուեր էր աս իրաւացի վախը ինչուան որ Արամ նորէն վախ ձգեց անոնց:

ԳԼԱՒ Բ.

Արամն Ինքեան Պարոյր:

Հ. Ո՞վ էր Արամ.

Պ. Հարմայի որդին և յաջորդը:

Հ. Արամին առջի թշնամին ո՞վ եղաւ.

Պ. Ենուքար Մարաց իշխանը, որուն դէմ երթալով Արամ յիսուն հազար զօրքով, յաղթեց ու զինքը բռնեց աշտարակի մը ծայրին գամեց (1828):

Հ. Հայոց երկրորդ թշնամին ո՞վ էր.

Պ. Բարշամ Բաբէլացւոց իշխանը որ նոյնպէս յաղթուելով ապանեուեցաւ Արամէն:

Հ. Հապա երրորդ թշնամին ո՞վ էր.

Պ. Պայապէս Կապադովկիոյ իշխանը որ յաղթուելով փախաւ Միջերկրական ծովուն կղզիներէն մէկը:

Հ. Արամ Պայապիսին երկիրները ինչ ըրաւ.

Պ. Բոլորին ալ սիրելով Մշակ անուանով մէկը խլեան դրաւ հոն, ու պատուիրեց որ ամէնքն ալ Հայերէն խօսին. որով ան տեղին անունն ալ Փոքր Հայք ըսուեցաւ, Մշակայ բնակած տեղն ալ՝ Մաժակ, որ է Գայսերի քաղաքը:

Հ. Արամայ վրայ ուրիշ ինչ գիտնալու բան կայ.

Պ. Ղինոս Ասորեստանցւոց Թագաւորին մարգարտազարդ պսակ մը ընդունեցաւ, և անոր երկրորդը կոչուեցաւ:

Հ. Ի՞նչ պատճառաւ Ղինոս ան Թագը խաւրեց.

Պ. Վասն զի Արամայ քաջութիւններին ակնածելով ուզեց անոր բարեկամութիւնը ստանալ:

Հ. Արամ ո՞րչափ տուն խլեց ու երբ մեռաւ.

Պ. Յիսունը ութը տարի խլեց ու մեռնելով իրեն յաջորդ թողուց Արայ որդին:

Հ. Արայ ինչու համար պատերազմի ելաւ Շամիրամայ դէմ.

Պ. Արայ շատ գեղեցիկ ըլլալով Շամիրամ Ասորեստանցւոց սխտամոլ Թագուհին ուզեց հետը կարգուիլ. բայց Արայ յանձն չառաւ ու պատերազմի ելաւ:

Հ. Պատերազմին վերջը ի՞նչպէս եղաւ.

Պ. Արայ քաջութեամբ կռուեցաւ, բայց պատերազմին ոսքցած առնը զարնուեցաւ ու մեռաւ. Թէպէտ և Շամիրամ ապրապրեր էր իր զօրացը որ զինքը ջրապանեն ոգի բռնեն (1769):

Հ. Շամիրամ ի՞նչ ըրաւ Հայաստանի մէջ.

Պ. Հաւնելով մեր աշխարհքին գրիչը և օդին գեղեցկութեանը, ամուր քաղաք մը և բերդ մը շինել տուաւ Շամիրամակերտ անուամբ որ Վան ալ կ'ըսուի. և ինչուան հիմայ կեցած են ան առեղուան շինած պատերը:

Հ. Արայի ո՞վ յաջորդեց.

Պ. Շամիրամ Հայոց վրայ իշխան դրաւ Արայի Կարդոս որդին:

Հ. Շամիրամ ու Կարդոս ի՞նչպէս մեռան.

Պ. Շամիրամ ու Կարդոս Ինդուասայ վրայ պատերազմի ելան՝ որ Շամիրամին որդին էր, ու իրմէ ապստամբած. բայց յաղթուելով երկուքն ալ մեռան:

Հ. Կարդոսին ո՞վ յաջորդեց.

Պ. Անուշաւան իր որդին, որ Թէպէտ և գերի ընկած էր Ինդուասայ ձեռքը, բայց սիրելի ըլլալով անոր, ազատեցաւ գերութենէն, ու եկաւ սիրեց իր հայրենեացը. երկար աստեղ իշխեց շատ խելքով ու մեռաւ:

Հ. Ո՞վ էր Պարեան.

Պ. Հայկայ մէկալ որդւոց ցեղերէն իջած կարիճ մը էր որ Անուշաւանին տեղը նահապետ եղաւ. որովհետև Անուշաւան որդի չունէր (1662):

Հ. Պարեանին վրայ ի՞նչ գիտելիք կայ, ուրիշներն ո՞վ յաջորդեց.

Պ. Անիկայ շատ քաջութիւններ ըրած ունի. իրեն յաջորդեց Աբրակ:

Հ. Աբրակին ո՞վ յաջորդեց.

Պ. Զաւան: Զաւանին յաջորդեց Փառնակ: Փառնակին Սուր:

Հ. Սուր նահապետին վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Սուր որ իրեն քաջութեանը համար ան անունը ժառանգեց, շատ յաղթութիւններ ըրաւ ընդդէմ թշնամեաց: Ասոր ատենը Քանանացիք Իսրայելացիներուն հարած ուրեմն ոմանք Հայաստան եկան, որոնցմէ ձեւացաւ Քանանիզեանց կամ Գնեթունեաց նախարարութիւնը:

Հ. Սուրայ ո՞վ յաջորդեց.

Պ. Եռեւ եռեւ յաջորդեցին Հաւանակ և Վաչտակ որոնց վրայ պատմութիւն չունինք:

Հ. Հայկակ Ա. նահապետը ի՞նչ քաջութեան գործք ըրած ունի.

Պ. Ամենէն Ասորւոց թագաւորին յաղ

թեց. բայց անոր Բէզոքոս յաջորդէն յաղ-
թուեցաւ ու մեռաւ (1369):

Հ. Որո՞նք յաջորդեցին Հայկակէն ետև.

Պ. Երկու հարիւր տարուան չափ մի-
ջոցի մէջ իշխեցին Հայոց վրայ ասոնք. Ամ-
բակ Ա. Առնակ, Շաւարշ Ա. Ներսէս, Վրա-
տամ, Կարբ, Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գոգակ
և Հրոյ որոնց վրայ գիտելիք մը չկայ:

Հ. Զարմայրին վրայ ինչ կը պատմուի.

Պ. Տրդատայեաց օգնութեան գնաց ու շատ
քաջութիւններ ըրաւ. բայց Աքիլլէսի հետ
պատերազմելով մեռաւ (1182):

Հ. Զարմայրէն ինչուան Հսկայորդի ոչ-
չափ նահապետներ նստան.

Պ. Գրեթէ չորս հարիւր տարուան մի-
ջոցի մէջ տասնի չափ նահապետներ նստան,
որոնց վրայ տեղեկութիւն մը չունինք. և են
ասոնք. Շաւարշ Բ., Պերճ Ա., Աղրուն,
Պերճ Բ., Բագրակ, Հոյ, Յուսակ, Աշրակ
Բ., Փառնաւազ Ա., Փառնակ Բ., ու Հրա-
կայորդի:

ԴԱՍ Գ.

Պարսկէն ինչուան Հայաստանց թագաւորութեան ծագումը. և խոսքերց իւրեանց։

Հ. Ո՞վ էր Պարսիկ.

Պ. Հակայորդեանց որդին էր, որ Հայոց առաջին թագաւորը եղաւ։

Հ. Ի՞նչ պատճառաւ թագաւոր պատկուեցաւ.

Պ. Արդաշէսաբաղ Ասորոց թագաւորին դէմ ապստամբեցաւ Վարդանէս իշխանին ու մարդան յաղթեցին անոր. ու ինքը Վարդանէսն թագ առաւ (746)։

Հ. Պարսկին անունը ուրիշ ինչ գիտաս որ ազգանունն բան եղաւ.

Պ. Ագրամելէք և Սանատրուկ Ասորեստանեցոց թագաւորին տղաքը Հայաստան փախան, որոնք վերջէն մեծամեծ նախարարութիւններ եղան, այսինքն Արծրունիք և Սանատուք կամ Սամեցիք։

Հ. Պարսկէն ետև որո՞նք թագաւորեցին.

Պ. Հարիւր տարուան չափ միջոցին մէջ հինգ թագաւորներ եղան, որոնց վրայ յիշատակութիւն մը չունինք. անունք են Հրաչեայ, Փառնաւազ Բ., Պանոյն, Կոռնակ, Փառոս։

Հ. Հայկակ Բ. ին վասն ինչ գիտելիք կայ.

Պ. Նաբուգոդոնոսորին հետ Երուսաղէմի վասն գնաց, ու հոնկէ Հայաստան բերաւ Շամիրամ անուանով իշխան մը, ուսկից սերեցաւ Բագրատունեաց ցեղը Բագարատ երեքի իշխանին անուանէն առնելով (605):

Հ. Ո՞վ յաջորդեց Հայկակին.

Պ. Իր որդին Երուանդ առաջին որ չորս տարի միայն թագաւորելով մեռաւ, անոր համար Սակաւակեաց ըսուեցաւ (565):

Հ. Ո՞վ է Տիգրան Ա.

Պ. Երուանդայ տղան ու Հայկազանց ամենէն երեքի թագաւորը:

Հ. Ինչու համար Աժդահակ Պարսից թագաւորը Տիգրանայ հետ թշնամացաւ.

Պ. Վասն զի Տիգրան բարեկամութիւն ըրաւ Կիւրոսի հետ՝ որ իր թշնամին էր:

Հ. Աժդահակ ինչ վարպետութիւն բանեցուց Տիգրանը մեռցնելու.

Պ. Տիգրանին Տիգրանուհի քոյրը իրեն կին առաւ, ու անոր ձեռքովը ուզեց սպանել զՏիգրանը:

Հ. Աժդահակայ շարութեան խորհուրդը առաջ գնաց.

Պ. Չէ. վասն զի Տիգրանուհին Աժդահակայ խորհուրդը ծածուկ իմացուց իր եղբօրը:

Հ. Ասով Տիգրանուհին վնաս մը եղա՞.

Պ. Չէ. որովհետև Տիգրան պատերազմը ուշացուց որ քոյրը առնէ գանձերով փախչի Ատրպատականի քովէն։

Հ. Պատերազմը ի՞նչպէս եղաւ.

Պ. Երբոր Կիւրոս իր զօրքովը եկաւ հասաւ, Տիգրան անոր հետ մէկտեղ Ատրպատականայ դէմ եկաւ. պատերազմին էն տաք միջոցը Տիգրան քաջութեամբ սպաննեց զԱտրպատականը, որով պատերազմը լմնցաւ։

Հ. Տիգրան պատերազմէն դառնալէն ետքը ի՞նչ ըրաւ.

Պ. Ատրպատականի կիներն, ընտանիքը և ուրիշ գերիները Հայաստանի մէջ բնակեցուց, ուսկից սերեցան Վիշապազունք կամ Մուրացան ըսուած ցեղը։ Իսկ Տիգրանուհի քոյրը Տիգրանակերտի կողմերը բնակեցուց, ուսկից որ սերեցաւ Ասման կամ Ասմանիկ ըսուած ազգաց ցեղը։

Հ. Տիգրան ի՞նչպէս թագաւորութիւն քշեց.

Պ. Շատ խելքով, շատ շինութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ. և քառասուն ու հինգ տարի թագաւորելէն ետև մեռաւ. իրեն տեղը յաջորդեց Վահագն իր որդին։

Հ. Վահագնի վրայ ի՞նչ բան կը պատմուի.

Պ. Խիստ քաջ ըլլալուն համար՝ վրան

շատ առատութիւնը զրուցեցին, և Վրացիք գինիքը կը պաշտէին։ Ասոր ցեղը Վահունիք բռնեցան (520)։

Հ. Վահագնի ով յաջորդեց.

Պ. Որդւոց որդի յաջորդեցին Առաւան, Ներսեհ, Զարեհ, Աղգամ, Բայգամ, Վան և Վահէ (351)։

Հ. Ինչու համար Աղեքսանդր Վահէին վրայ եկաւ.

Պ. Վան զի Դարեհ Պարսից թագաւորին օգնութիւն խաբեր էր Վահէ։

Հ. Ինչպէս մեռաւ Վահէ.

Պ. Աղեքսանդրի գէմ պատերազմելով շատ քաջութիւններ ընելէն եռքը՝ պատերազմին մէջ ընկաւ մեռաւ, ու ասով Հայկազանց թագաւորութիւնը վերջացաւ 1800 տարի գոնեալէն եռքը (328)։

Հ. Վահէէն վերջը Հայաստանի ով կիշխէր.

Պ. Մակեդոնացւոց կամ Արաբաց թագաւորները մէկ իշխան մը կը խաբէին որ Հայաստանը կառավարէ. ա՛ռ իշխանները Կուսակալք կըսուին։

Հ. Ո՞վ եղաւ առջի կուսակալը.

Պ. Միհրան, որն որ Աղեքսանդրէն խրբկուեցաւ ու հինգ տարի կենալէն եռքը նա կանչուեցաւ (319)։

Հ. Մինչեւ ո՞ւր ունի՞ եղաւ կուսակալ.

Պ. Նէոպտոլեմոս, որ Հայոց վրայ գէշ աչքով կը նայէր, ան պատճառաւ շատ նեղութիւններ տուաւ Հայոց:

Հ. Ո՞վ ազատեց զիրենք ան նեղութենէն.

Պ. Ադուարդ մեր քաջ նախարարը, որ Նէոպտոլեմոսը փախուց Հայաստանէն:

Հ. Ադուարդ մինակ իշխեց Հայոց վրայ.

Պ. Չէ. Վասն զի Նշանենէս մանկագոնացի իշխանին միջնորդութեամբը նորէն եկաւ Նէոպտոլեմոս ու իբրև Ադուարդին երկրորդը կը կենար (317):

Հ. Ադուարդ որչափ տարի իշխեց.

Պ. Ուրիշ շատ քաջութիւններ ընելէն ետքը հաստատուեցաւ իր իշխանութեանը մէջ, ու չի տարի իշխելէն ետքը մեռաւ:

Հ. Ադուարդին տեղը ո՞վ խաբուեցաւ կուսակալ.

Պ. Հրանտ. ասոր ալ յաջորդեց Արտաւազդ անունով իշխան մը, որ ապստամբելով Սելևկիացւոց (1) Անտիոքոս Դ. Թագաւորէն՝ ինքնագլուխ իշխեց:

Հ. Յաջորդեցաւ Արտաւազդին ապստամբութիւնը.

---

(1) Ասորիս՝ Սելևկիայի ու Շրջանի իրենց մայրաքաղաքն Բաբելոնի Սելևկիան անուամբ:

Պ. Վախենալով Անտիոքացիներ շատ ընծաներով խոստացան հարկը տալ, ու անով նորէն կուսակալ եղաւ։

Հ. Արտաւազդն տեղը ո՞վ գրուեցաւ կուսակալ.

Պ. Արտաշիսս և Զահրատ Հայ իշխանները։

Հ. Զահրատ և Արտաշիսս ինչուան վերջը հաւատարիմ մնացի՞ն Սելևկիացւոց.

Պ. Չէ. հապա Հռոմայեցւոց օգնութեամբը ազատամիտեցան ու երկուքն ալ թագաւորեցին։ Զահրատ Փոքր Հայոց վրայ, Արտաշիսս ալ Մեծ Հայոց վրայ. ուր որ Ընիերալ Կարթեգոնացի մեծ զօրապետին խրատովը Արտաշատ քաղաքը շինեց։

Հ. Անտիոքոս Եպիփան երբոր լսեց սա բանս ինչ ըրաւ.

Պ. Արտաշիսին վրայ պատերազմի ելլելով բռնութեամբ հնազանդեցուց։

Հ. Արտաշիսին և Զահրատին վերջը ո՞ր ինչ եղաւ Հայոց.

Պ. Ասեցմէ վերջը քանի մը թագաւորներ ալ նստան Հայաստան ինչուան Արշակունեաց առնելը, բայց պատմութիւնին շփոթ ըլլալով որոշ բան մը չկրնանք վերնին։ Միայն թէ ասոնց վերջի թագաւորը եղաւ Մորմեռնիկէս Զահրատին տղան (159)։

ՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԳԼԱՒ Դ.

Վերջերեն մինչեւ Բնջոն Արքայազն Ա.

139 9 -51

Հ. Ո՞վ էին Արշակունիք։

Պ. Պարթև ըսուած ազգէն էին, որոնցմէ Արշակ անունով կարիճ մը թագաւոր եղաւ իր ազգին. իր թոռը Արշակ ալ շատ կարիճ ըլլալով թագաւորութիւնը մեծցուց, Հայաստանին ալ տիրեց. և իր եղբայրը Վաղարշակը հոն թագաւոր դրաւ (149)։

Հ. Վաղարշակ թագաւոր ըլլալէն ետքը ինչ պատերազմ ըրաւ.

Պ. Մորփիւզիկեան հետ պատերազմ ընելով զինքը սպաննեց ու անով բոլոր Հայոց տիրեց։

Հ. Վաղարշակ ուր դրաւ իր աթոռը.

Պ. Մծբին քաղաքը, որ Ասորւոց երկրին և Հայաստանին մէջ տեղուանքն է։

ՀԱՅ. ՍՍՌ. ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ-Ագ.ՍՍՌ

Հ. Վաղարշակ Հայերը սիրեց.

Պ. Տեսնելով անոնց քաջութիւնը և սիրասիրութիւնը առ աստուծոյ սիրեց Հայերը, որ եռանէ եղաւ գիտնալ ու իմանալ այնպիսի պատուական ազգին պատմութիւնը:

Հ. Ուրեմն Վաղարշակ գտաւ ուզած պատմութիւնները.

Պ. Հայաստանի մէջ չգտնելով Մարիբաս Կատինա անուանով մէկը խաբեց Ղեւոնդ, որ երթայ հոն գրատան մէջէն գտնէ Հայոց պատմութիւնը, ինչպէս որ գտաւ ալ:

Հ. Վաղարշակ ուրիշ ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

Պ. Նախարարաց և արքունեաց մէջ շատ կարգեր դնելէն ետքը, որոշեց ալ որ թագաւորին հետ միայն անդրանիկ որդին մնայ, մէկալները ուրիշ տեղ կենան:

Հ. Վաղարշակայ ո՞վ յաջորդեց.

Պ. Արշակ Ա. իր որդին, որ շատ բարեկարգութիւններ ու քաջութիւններ ըրաւ (127):

Հ. Գլխաւոր քաջութիւնը ո՞րն է.

Պ. Պոնտացիները նուաճեց ու իրեն յաղթութեան նշան կոթող մը անելց ծովուն եզերքը. ու նիզակը զարնելով ծակեց քարը:

Հ. Արշակայ Ա.էն ո՞վ յաջորդեց.

Պ. Իր որդին Արտաշէս Ա., որ Յունաստանի և բոլոր Փոքր Ասիոյ սիրեց:

Հ. Ի՞նչ բան ըրաւ Պարսկաստանի մէջ.

Պ. Իր անունովը սուակ կոխեց. ու Պարսից թագաւորը որ ինչուան ան առնն պատուով առաջին էր՝ իրեն երկրորդը ըրաւ։

Հ. Արտաշէսի զօրաց բազմութիւնը վրայ ի՞նչ կը պատմուի.

Պ. Կ՚ըսեն թէ երբոր ամէնքը միաբան նետ նետէին արևը կը խաւրանէր. ու թէ որ մէյ մէկ քար նետէին՝ բլուր մը կը ձևանար։

Հ. Արտաշէս ի՞նչպէս մեռաւ.

Պ. Զօրացը մէջ խռովութիւն իյնալով զինքը սպաննեցին (87)։

Հ. Արտաշէսին ո՞վ յաջորդեց.

Պ. Տիգրան իր որդին որ արդէն երկուսարիւ՝ ի վեր հօրը հետ կը թագաւորէր։

Հ. Տիգրան Բ. ին առջի գործքը ի՞նչ եղաւ.

Պ. Յոյները նուաճեց, որոնք Արտաշէսի մահը լսելով ապստամբեր էին։

Հ. Տիգրան զո՞վ դրաւ իրեն փոխանորդ Պոնտոսի մէջ, ու Յոյները նուաճեց.

Պ. Իր Միհրդատ անունով քեռայրը, որ քաջ ու խելացի մարդ էր։

Հ. Տիգրան Բ., ի՞նչ կրօնական գործ ըրաւ թիւններ ըրաւ.

Պ. Այլ և այլ տեղեր մեհեանները շինելով

Յունաստանէն բերած չաստուածներու արձաններէն կանգնեց ու անոնց քուրմեր հաստատեց։

Հ. Աստուց եկեղեցը ինչ բան ըլաւ Տիգրան.

Պ. Աստուց եկեղեցին տիրեց և անոնց Սեղինէ թագուհին բռնեց սպաննեց. վասն զի Սեբեկիացիքը յոյգորեր էր Տիգրանէն աղաչատամբելու։

Հ. Հրէայք երբոր լսեցին Սեղինէ թագուհւոյն սպաննուիլը ինչ ըրին.

Պ. Շատ ընծաներ տուին Տիգրանայ որ իրենց Աղեքսանդրա թագուհիին ետաս մը չհասցընէ։

Հ. Ինչ պատճառաւ հռովմայեցիք Միհրդատայ հետ թշնամացան.

Պ. Վասն զի Միհրդատ Կապադովկիոյ իշխելով իր Արիարաթ տղան անոնց թագաւոր դրաւ. Կապադովկացիք ալ հռովմայեցւոց գիմեցին։

Հ. Հռովմայեցիք ալ ինչ ըրին.

Պ. Մէկէն Սիդզա քաջ զօրապետը խաւրեցին որ եկաւ Արիարաթը և իրեն դորդեսաս զօրապետը վռնտեց, և Արիոբարզան Կապադովկացին թագաւորեցուց։

Հ. Միհրդատ ան ատեն ինչ ըրաւ.

Պ. Տիգրանէն օգնութիւն առնելով նո-

ին վանեց Հռովմայեցիները և Աքիարա-
թը թագաւորեցուց։

Հ. Հռովմայեցիք նորին զոլք խաւրեցին
Միհրդատայ վրայ.

Պ. Այլեայլ զօրավարներ խաւրեցին ո-
րոնց շատ անգամ յաղթեց Միհրդատ, և
Ակիւղաս զօրավարնին սպաննեց բերնէն
վար հալած ոսկի լեցնելով։

Հ. Հռովմայեցիք զո՞վ խաւրեցին զօրա-
վար.

Պ. Ղուկուղղոսը որ շատ հեզ կռուելով
երբեմն յաղթուեցաւ երբեմն ալ յաղթեց
Միհրդատայ։

Հ. Ի՞նչու համար Տիգրան Միհրդատայ
վրայ բարկացաւ.

Պ. Վասն զի անգամ մը չարաչար յաղ-
թուելով Ղուկուղղոսէն փախաւ Տիգրանայ
քով, և Ղուկուղղոս շատ տեղերու տիրեց.
բայց վերջին նորին հաշտուեցաւ Տիգրան։

Հ. Տիգրան ի՞նչ պատերազմի մէջ յաղ-
թուեցաւ Ղուկուղղոսէն.

Պ. Ղուկուղղոս Հայաստան մտաւ Տիգ-
րանակերտը պաշարեց. Տիգրան Հռովմայե-
ցւոց քիչուորութիւնը տեսնելով անհոգ
կեցեր էր. բայց Ղուկուղղոս յանկարծ վը-
րայ վազելով Տիգրանին զօրքերը հալածեց
ու Տիգրանակերտը առաւ։

Հ. Ղուկուզոս կրցան իր յաղթութիւնը վրայ ուրախանալ.

Պ. Չէ. վասն զի լսեց որ Տիգրան՝ իր ուրիշ տեղ թողուցած զօրացը վրայ հասնելով լաւ մը ջարդ տուեր էր. ու քիչ մը առնելէն իր վրան ալ հասնելով Միհրդատին հետ, վերջապէս Հայաստանէն հալածեց:

Հ. Հռոմայեցիք Ղուկուզոսին տեղը ղրկել խաբեցին.

Պ. Պոմպէոսը, ու Ղուկուզոսը եռ կան չէին:

Հ. Միհրդատ ինչու ինքզինքը սպաննեց.

Պ. Իր Փառնակէս որդին և Կասսոր դաշնակը կաշառք առած Հռոմայեցւոց կողմը անցան. ինքն ալ բերդի մը մէջ անոր նակաւ պաշարուելով ինքզինքը սպաննեց Պոմպէոսին ձեռքը չիյնալու համար (39):

Հ. Տիգրան երբոր լսեց Միհրդատայ մեռնելը ինչ ըրաւ.

Պ. Տեսնելով որ իր Տիրան որդին ալ ապստամբեր է իրմէ ու ինքն ալ ծերացած, հաշտուեցաւ ըրաւ Պոմպէոսի հետ, ու ասով պատերազմը լմնցաւ:

Հ. Տիգրան Պոմպէոսի երթալէն ետքը Հռոմայեցւոցմէ վրէժը առաւ.

Պ. Միջագետաց դորէն սիրեց, ու Դաբիանոս Հռոմայեցւոց զօրագլուխը Եգիպտոս փախաւ:

Հ. Տիգրան ի՞նչու Արշակ Պարսից թագաւորին տուաւ նորէն նախագահութեան պատիւը.

Պ. Վասն զի տեսաւ որ Հռոմայեցիք նորէն Ասորոց ու Մեծագէտաց տիրելով իր վրայ կուգային որոնց չէր կրնար դէմ դնել ծերութիւնը պատճառաւ, ուստի Արշակի տուաւ նախագահութիւնը՝ որ իրեն օգնէ:

Հ. Հռոմայեցիք Գարիանոսին տեղը զո՞վ խաբեցին.

Պ. Կրասոսը որ յաղթութիւնով սպանեցաւ Հայերէն ու Պարթևներէն:

Հ. Ո՞վ էրաւ Հայոց զօրավար Տիգրանայ ծերութեան առեն.

Պ. Բարզափրան քաջ նախարարը որ Հայոց և Պարսից բանակին ընդհանուր սպարապետն էր:

Հ. Բարզափրան ի՞նչ գործողութիւն ներ ըրաւ Ասորոց երկրին մէջ.

Պ. Բոլոր Ասորոց երկրին տիրեց, և Երուսաղէմն ալ առաւ խաբէութեամբ. թէպէտ և վերջը նորէն առին Հռոմայեցիք Հայոց ձեռքէն:

Հ. Ա՞յ յաղթութիւններէն ետքը Տիգրան ո՞րչափ ապրեցաւ.

Պ. Խիստ քիչ. ութսունը հինգ տարուան մեռաւ յիսունուչորս տարի թագաւորելէն ետքը (35):

ԴԱՍ Ե.

ԱՐՔԱՍԱՆ Ա. ԱՌԱՋԻՆ ԱՐՔԱՅ։

Հ. Ո՞վ յաջորդեց Տիգրանայ.
Պ. Արտաւազդ Ա. Տիգրանայ որդին։

Հ. Արտաւազդ ի՞նչ ճամբայ բռնեց.
Պ. Ինքզինքը կերուխուսի տուաւ որով Անտոնիոս Հռովմայեցւոց զօրապետը բոլոր Ասիոյ երկրին և ուրիշ տեղերու տիրեց։

Հ. Անտոնիոս ի՞նչ պատճառաւ Արտաւազդայ հետ թշնամացաւ.
Պ. Վասն զի Արտաւազդ ընդդէմ իրեն խոստմանը ծածուկ Պարթից օգներ էր, փոխանակ զի Անտոնիոսին օգնելու խօսք տուեր էր։

Հ. Անտոնիոս ի՞նչ կերպով Արտաւազդը բռնեց.
Պ. Աւելի խաբեբելով քան թէ քաջութեամբ բռնեց զինքը ու ոսկիէ շղթայի զարկած Եգիպտոս տարաւ (30)։

Հ. Արտաւազդին բռնուելէն ետքը Հայաստանի վիճակը ի՞նչ եղաւ.
Պ. Անտոնիոս տիրեց Հայաստանի ու Սորին Հայքը իր Աղեքսանդր տղուն տուաւ, և Վէրինը Մարաց։

Հ. Արտաւազդը ո՞վ սպանեց.

Պ. Կղէոպատրա թագուհին, որ գլուխը կտրել տուաւ։

Հ. Ո՞րչափ տարի Հռոմայեցիք Հայաստանի տիրեցին.

Պ. Խիստ քիչ. վասն զի Արշամ Տիգրանին եղբօրորդին Պարսից օգնութեամբը Հռոմայեցիները վռնտեց ու ինչուան Կապադովկիա տիրեց (28)։

Հ. Ինչո՞ւ համար Արշամ սկսաւ Հռոմայեցւոց հարկ տալ.

Պ. Օգոստոսէն խնդրեց Արտաւազդայ երկու տղաքը որ Հռոմ գերի էին. երբոր անիկայ չտուաւ, ան տարին Արշամ յանձն առաւ հարկ տալ, միայն թէ անոնք ազատին. ինչպէս որ ազատեցան։

Հ. Ի՞նչ պատճառաւ Հայոց թագաւորութիւնը երկու բաժնուեցաւ, այսինքն Վերին և Ստորին.

Պ. Վասն զի Վերին Հայաստանի Հայերը որ Պարսից տակն էին, ձանձրացած անոնց տուած բռնութիւններէն, Օգոստոս կայսեր գիմեցին. ան ալ Արտաւազդայ տղան Տիգրանը թագաւոր դրաւ անոնց որ Փոքր Տիգրան ըսուեցաւ։ Այս Վերին Հայոց թագաւորութիւնը յիսունմեկ տարի քշելէն ետքը, Երուանդ Ստորին Հայոց թագաւորութեան հետ միացուց։

Հ. Արշամ թշնամի առեն թագաւոր է-
ղաւ.

Պ. Քանզի՝ ինը տարի խաղաղութեամբ
թագաւորեց։

Հ. Աբգար Արշամայ որդին իր հօրը յա-
ջորդելով ինչ անուն հանեց.

Պ. Իր խելացիութեանը և հեզաբարոյու-
թեանը համար ամէնքը սկսան Աւոգ այր
ասել իրեն, որ վերջին ծռմեկուելով Աբ-
գար ըսուեցաւ։

Հ. Ինչու՞ համար Հերոդէս Աբգարու
հետ թշնամացաւ.

Պ. Վասն զի Հերոդէս կ'ուզէր որ իր
պատկերն ալ Օգոստոսի պատկերին հետ
մէկտեղ մեհեանները մէջը կախուի. Աբ-
գար ասս բանս յանձն չառաւ, ու պատ-
բազմ բացուելով մէջերնին՝ Հերոդէս չա-
բաչար յաղթուեցաւ։

Հ. Ինչու՞ համար Աբգար Հռոմ գնաց.

Պ. Վասն զի Հերոդէսի կողմը եղողնե-
ը ոմն պահելով Աբգարու վրայ ամբաստա-
նութիւններ ըրին Օգոստոս կայսեր. ան ալ
Հռոմ գնաց ու ինքզինքը արդարացուց։

Հ. Ինչու՞ համար թագաւորական ամ-
ոը Մծբինէն Եդեսիա փոխադրուեցաւ.

Պ. Վասն զի Աբգար կ'ուզէր Հռոմայե-
ցւոցմէ ապաստանիլ. ուստի ամոը Եդեսիա
փոխեց ու սկսաւ ամրցնել զանիկայ։

Հ. Ի՞նչ բանէն գրգռուեցաւ Աբգար ապաստանելու Հռոմայեցւոցմէ.

Պ. Տիբերիոս կայսեր ուրախակցութեան համար խրկուած Հայ գեսպաններէն անարգուեցան Հռոմայեցւոցմէ փոխ պատճառի մը համար։

Հ. Ի՞նչ արգելք եղաւ որ Աբգար չկրնայ ապաստանիլ.

Պ. Ամուսնոյ Պարսից թագաւորը մեռնելով նոյն օրերը, Պարսկաստան գնաց Աբգար, ու անոր որդւոյն մէջ ինկած խառվուռթիւնը խաղաղցուց, Քրիստ 21 թուին։

Հ. Ի՞նչ ձախորդութիւն հանդիպեցաւ Աբգարու Պարսկաստան.

Պ. Սաստիկ բորոտեցաւ որ բժիշկներէն չկրցան առողջացնել. վերջը թագէոս առաքեալը բժշկեց։

Հ. Ի՞նչ կերպով Աբգար Քրիստոսի ծանօթացաւ.

Պ. Իմանալով որ իր ապաստանութեան խորհուրդը Տիբերիոս կայսեր ականջը հասեր է, գեսպաններ զրկեց Պաղեստին Հռոմայեցւոց զօրապետին, որ գինքը արգարացնեն. գեսպաններէն տեսնելով հոն Քրիստոսի ըրած հրաշագործութիւնները՝ եկան պատմեցին իրեն։

Հ. Աբգար ի՞նչ ըրաւ այն ատեն.

Պ. Թուղթ գրեց Քրիստոսի և իր Անանիա

սուրհանդակն ալ խաբեց որ երթայ ա-
ղաչէ Բրիտանոսի Հայաստան գալու ու զին-
քը բժշկելու. իսկ թէ որ չգայ՝ պատկերը
օրինակէ ու բերէ։

Հ. Բրիտանոս կատարեց Աբգարու խնդ-
դիրքը.

Պ. Զէ. քայլ պատասխան գրեց Աբգա-
րու, ու խօսք տուաւ որ Համբառնալէն
եռքը իր աշակերտներէն մէկը կը խաբէ որ
զինքը բժշկէ. ինչպէս որ եղաւ Թադէոս
առաքելոյն ձեռքովը 31ին։

Հ. Աբգար Բրիտանոսի հաւատալէն ու
բժշկուելէն եռև ի՞նչ ըրաւ.

Պ. Իրէք տարի ալ ապրեցաւ ու մէյմէկ
թուղթ գրեց Տիրէր կայսէր, Պարսից և Ա-
սորոց թագաւորներուն՝ ցուցնելով Բրիտ-
անոսի ասուածութիւնը. ու ընդ ամէնը
երեսունչորսուքը տարի թագաւորելէն եռև
սրբութեամբ մեռաւ։

ԳԱՍ Զ.

Ընանէ, Սանատրուկ և Երուանդ։

Հ. Աբգարու մեռնելէն եռև ինչո՞ւ խառ-
վութիւն ինկաւ Հայաստանի մէջ.

Պ. Վասն զի Ընանէ Աբգարու որդին
Եդեսիոյ մէջ թագաւորեց ու Նորէն կա-
պաշտութիւն սկսաւ. իսկ Սանատրուկ Աբ-

գարու քեռորդին Շաւարշանի մէջ Թագաւորեց ու կ՚ուզէր բոլոր Հայաստանի տիրել։

Հ. Ինչպէս մեռաւ.

Պ. Երբոր իր Թագաւորական պարտքը ներոգէլ կուտար, սիւն մը իյնալով վրան սպաննեց զինքը, ջորս տարի Թագաւորելէն ետքը (38)։

Հ. Ինչպէս մեռնելէն ետև ով Թագաւոր եղաւ Հայաստանի.

Պ. Սանատրուկ՝ որ Եղեսացւոց երդումտուաւ՝ Թողու որ ազատ պարտեն զՔրիստոս. Թէպէտ վերջէն ստեց իր երդմունքը ու շատ մարդ նահատակեց, ինչպէս նաև իր Սանդուխտ աղջիկը։

Հ. Սանատրուկ քաղաքական շինուածներէն մէջ ի՞նչ երևելի գործք ըրաւ.

Պ. Ամբիոնը՝ որ երկրաշարժէ մը աւերուած էր, գրանելի կերպով նորոգեց, ու քաղքին մէջ տեղը իր արձանը կանգնեց ձեռքը գրամ մը տուած. իմացնել ուզելով որ բոլոր ունեցածը ծախեր է։

Հ. Սանատրուկ ի՞նչ կերպով մեռաւ.

Պ. Որսի ատեն գիպուածով նետով մը գարնուելցաւ ու մեռաւ, երեսունը չորս տարի Թագաւորելէն ետքը։

Հ. Սանատրուկին ով յաջորդեց.

Պ. Երուանդ Բ, որ Թէպէտ և Արշակու-նի էր, բայց Թագաւորական ցեղէ չէր։

Հ. Երուանդ ինչպէս Թագաւոր եղաւ.

Պ. Իրեն ըրած քաջութիւններովը և քաղցրաբարոյութեամբը ամենուն սիրոյ իրեն քաշեց, որով Սանատրուկ մեռնելէն ետև զինքը Թագաւոր գրին նախարար-ները։

Հ. Երուանդ իր Թագաւորութիւնը ա-պահովցնելու համար ինչ բան ըրաւ.

Պ. Բոլոր Սանատրուկ ցեղը Թրէ անցնել տուաւ, որոնցմէ միայն Արտաշէս անուն-ով ազատ Պարսկաստան փախաւ Մարտա Բա-գրատունիին ձեռքովը։

Հ. Ինչո՞ւ համար Երուանդ Միքայէլ-քը հռովմայեցւոց տուաւ ու ինքը Վէրին հայքը առաւ.

Պ. Վասն զի ասեց Արտաշէսի Պարսկաս-տան փախչիլը և ուզեց իր Թագաւորու-Թիւնը առ կերպով զօրացնել. առ պատճա-ռաւ ամենուն աչ Արմաւիր փոխադրեց։

Հ. Երուանդայ ըրած շինութիւններուն մէջ որն է երևելին.

Պ. Երուանդաշատ քաղաքը իրեն գե-ղեցկութիւնը համար, ուր որ վերջէն ամենուն աչ փոխադրեց, ու Բագարանը իրեն մե-հեանները համար։

Հ. Ի՞նչ կերպով Արտաշէս իր թագաւորութիւնը առաւ.

Պ. Դարեհ Պարսից թագաւորին օգնութեամբը, որուն միջնորդ եղան Սմբատ և Պարսից նախարարները (88)։

Հ. Երբոր Երուանդ լսեց Արտաշէսի գալը իր վրայ ի՞նչ ըրաւ.

Պ. Որովհետև Ռուէնացւոց վրայ պատերազմի գացած էր, մէկէն հաշտութիւն ըրաւ ու առատ վարձքով շատ զօրք ժողված սկսաւ Արտաշէսի վրայ երթալ։

Հ. Երբոր Հայերը լսեցին Արտաշէսի գալը՝ ի՞նչ կերպով ընդունելցան զինքը.

Պ. Շատ ուրախութեամբ. որով շատ նախարարներ ամբողջ իրենց գնդովը Արտաշէսի կողմը անցան, որոնցմէ մէկն էր Արգամ որ խիստ քաջ մարդ էր։

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Արտաշէսի կողմը, որովհետև Երուանդ փախչիլ Երուանդաշատ։

Հ. Երուանդ ի՞նչպէս մեռաւ.

Պ. Նորէն պատերազմը սաստկանալով Երուանդաշատը առնուելցաւ, ու հոն իր պալատին մէջ Երուանդն ալ սպանուելցաւ Արտաշէսի զօրքերէն (89)։

ԴԱՍ Ժ.

Աբրահամ Էլիազարեան Խլրեան Տէրտէր։

Հ. Աբրահամ Բ., թագաւորելով իր առջի գործքը ինչ ըրաւ.

Պ. Իրեն բարերարներեն մեծ պարգևներով պատուեց. Սմբատը ընդհանուր սպարապետ ըրաւ, Աշոտը իրեն երկրորդ։

Հ. Ուրիշ որոնք բարիք ըրաւ Աբրահամ.

Պ. Դիսակ նախարարին Ներսէս անունով որդւոյն որն որ մեծ նախարարութիւնը բաւ Դիմաքսեան կամ Կամսարական անուանելով. որովհետև որ Դիսակ գէմքին կէսը կորսնցուցեր էր պատերազմի մէջ Աբրահամը ազատելու համար։

Հ. Աբրահամ որոնց հետ պատերազմ ըրաւ.

Պ. Ամենայն հետ որոնց յաղթեց և թագաւորին տղան պատերազմի մէջ բռնեց։

Հ. Ինչպէս լմնցաւ պատերազմը.

Պ. Ամենայն թագաւորին Սամթինիկ աղջիկը Աբրահամի ապաշելով եղբայրը ազատեց ու պատերազմը լմնցուց, և ինքն ալ Աբրահամի թագուհի եղաւ։

Հ. Աբրահամ քաղաքական բաներու մէջ ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

Պ. Ամենայն քանի կարգ կանոն գրաւ և ծաղկեցուց Հայաստանը. որով իրենեանց սիրելի և օտարաց նախանձելի եղաւ թէ ինքը և թէ իր աշխարհքը։

Հ. Ի՞նչ մասնաւոր նախարարութիւն հաստատեց Արտաշէս.

Պ. Ազատաց կոչմանէ Սահմանիկայ համար եկած հարստածուները մասնաւոր ցեղ որոշեց Ռաւեղեան անուանելով։

Հ. Արտաշէս եռանէ եղաւ Հռոմայեցիներին ապստամբելու.

Պ. Շատ ջանք ըրաւ առ քանիս. Տրդիատոսի տուքը տալը դադրեցուց, և Հռոմայեցւոց զօրացը քանի մը անգամ յաղթեց։

Հ. Արտաշէս Բ. կրցաւ իր խորհուրդը առաջ տանիլ.

Պ. Չէ. վասն զի երբոր լսեց Տրդիատոսի անթիւ բազմութեամբ գալը, վախնալով շատ ընծաներ առած գիմացը ելաւ ու անոր բարկութիւնը խլեցուց։

Հ. Ո՞ւր մեռաւ Արտաշէս.

Պ. Մարանդ գաւառը՝ Մարաց կողմերէն գառնալու ատեն քառասունուսկ տարի թագաւորելէն ետքը. այնպէս ազգին զինքը Հայերն՝ որ շատը իրենք զիրենք ազատեցին գերեզմանին վրայ (129)։

Հ. Արտաւազդ Բ. իր հօրը տեղը յաջորդելով ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Զբօսաւէտ և անկարգ կեանք ունեցաւ. բոլոր իր եղբայրներէն քովէն վռնտեց, միայն Տիրանը քովը պահեց, երեն յաջորդեցնելու համար:

Հ. Արտաւազդ ինչպէս մեռաւ.

Պ. Որսի ելած ատենը վհի մը մէջ ինկաւ ու կորսուեցաւ, երկու տարի թագաւորելէն ետքը:

Հ. Տիրան Ա. իր եղբօրը յաջորդելով ինչ Համբաւ բռնեց.

Պ. Եղբօրը անկարգ և անհոգ Համբան. ան պատճառաւ տասնմեկ տարի թագաւորելէն ետև կառավարութիւնը Երատոնաւ անուանով իշխանին յանձնեց ու ինքը Եկեղեաց գաւառը քաշուեցաւ:

Հ. Ասոր ատենը Հռովմայեցիք ինչպէս էին Հայոց հետ.

Պ. Երբոր Անտոնիոս Պիոս կայսր եղաւ, Տիրան խնդակցութեան դեսպան խրկեց հարկն ալ մեկուէզ. Անտոնիոս սիրով ընդունեցաւ, և թագ ու ծիրանի խաւրեց Տիրանայ՝ և սուակ մը կոխել տուաւ ձեռքը Տիրանայ ուսին վրայ գրած:

Հ. Տիրան ինչպէս մեռաւ.

Պ. Քսանուերկու տարի թագաւորելէն ետքը օր մը Համբայ ընելու ատեն՝ ձեռն հիւս մը վրան փրաւ ու խոցեց զինքը (151):

Հ. Տիգրանին ովքա յաջորդեց.

Պ. Տիգրան Գ., իր ազգի եղբայրը, որ Պերոզ Պարսից թագաւորին հետ միացած յաղթեց Հռովմայեցւոց և Սեւերիանոս զբրավարին ալ սպաներեց:

Հ. Տիգրան ում յաղթուելենէն եաքը ինչ ձախորդուելեան հանդիպեցաւ.

Պ. Որեղեան կայսրը լսելով աս եղածները՝ Վերոս Ղուկիոս իր կայսերական խաւրեց որ եկաւ իր թշնամիներուն յաղթեց, ու Տիգրանին վրան խղճալով գերուելենէ ազատեց, որ կնիկէ մը խաբուելով բռնուեր էր Մեծագեաքի կողմերը գացած ատենը:

Հ. Տիգրան երկրորդին ում յաջորդեց.

Պ. Վաղարշ իր որդին. ասոր ատենը Հայաստանի վրայ եկան Հիւսիսային ազգերը, ինքն ալ քաջուելեամբ պատերազմելով վռնտեց. բայց ինքն ալ զարնուելով մեռաւ, քսան տարի թագաւորելէն եաքը:

Հ. Խոսրով առաջին թագաւորելէն եաքը իր առջի գործողութիւնը ո՞րն եղաւ.

Պ. Հիւսիսային ազգաց վրայ պատերազմի եկաւ, իր հօրը մահուան վրէժը առնելու համար ու յաղթեց (214):

Հ. Ինչպէս Կարակալլա Խոսրովուն ինչ բան ըրաւ.

Պ. Կարակալլա երբոր Մեծագեաքի կողմերը եկեր էր, Խոսրով գիմացը գնաց պա-

տուելու համար զինքը. բայց Կարապետը զինքը չմեռցուց որ գտնայ, ինչուան որ Հայերը կապած սկսան Կարապետին վրայ վազել։

Հ. Ինչու համար Արտաշիր Պարսից թագաւորը եռեկ եղաւ խորովը ապաներելու.

Պ. Արտաշիր Պարսից Արտաւան թիկրը ապաներեց որ Աբշահունի էր ազգաւ ու ինքը թիկր եղաւ. ասա բանիս համար խորովանոր գէմ եղաւ, և շատ անգամ յաղթելով ինչուան Հնդկաստան փախուց զինքը և չէր թողուր որ հանգիստ թագաւորէ։

Հ. Արտաշիր երբոր պատերազմով չկրցաւ խորովը յաղթել ինչ ըրաւ.

Պ. Սէծամէծ բաներ խոստացաւ ան մարդուն որ Հայաստան երթալով խորովը ապաներէ։

Հ. Ո՞վ յանձն առաւ ասա բանս.

Պ. Ընակ Պահլաւունին, որ Հայաստան էկաւ, ձևացնելով որ Արտաշիրի բռնաւ թիւնեներին փախեր է։ Ճամբան գալուստնը ծնաւ իր որդին մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը։

Հ. Ընակ ինչպէս կատարեց իր չարութիւնն խորհուրդը.

Պ. Օր մը որսի ատեն նեռով զարկաւ ապաներեց խորովը. ու երբոր թագաւորին քովն մարդիկնեը զինքը կ'ուզէին ապան

ներ, փախչելու առնն գեղը ինկաւ ու խրդ գուեցաւ (259)։

ԴԱՍ Ը.

ՏՐԴԱՏ ԵՒ ԽՍՐՈՎԲ։

Հ. Մեծին Խոսրովու ժամանակին եւսն Հայոց վիճակը ինչպէս եղաւ.

Պ. Նկաւ Արտաշիր ու բոլոր Հայոց ազգն և Խոսրովու ցեղը ջնջել տուաւ, որոնց մէջ Տրդատ անուանով մանչ մը և անոր խոսրովիզուխտ քոյրը ազատեցան Արտաւազդ Մանդակունիին և Օտտ Սմատունիին ձեռքովը։

Հ. Տրդատը ուր փախաւ Արտաւազդ Մանդակունին.

Պ. Նախ Կեսարիա ու վերջը Հռոմ, ուր շատ քաջութիւններ ընելով մեծ պատուոյ հասաւ։

Հ. Արտաշիր ինչպէս առնն ազգն Հայոց վրայ և ինչ գործ ալեհիւն ըրաւ.

Պ. Արտաշիրն անկած սահմանագլխի քարերուն վրայի արձանագրութիւնները աբեկ տալով իր անունը գրել տուաւ՝ պարծանքին. քանզի ազգն Հայոց և Պարսից վրայ ու մեռաւ։

Հ. Արտաշիրին ով յաջորդեց.

Պ. Իր Շապուհ որդին, որուն առնելը Տրդատ Հռոմայեցի զորքով եկաւ ու առաւ իր հայրենական Ժառանգութիւնը։

Հ. Տրդատ ի՞նչ արդիւնք ըրաւ որ Հռոմայեցիք իրեն օգնութիւն տուին.

Պ. Դիոկղեսիանոսի կողմանէ Գոթացւոց Հռչէ հակայ ու քաջ թագաւորին հետ մենամարտութիւն ընելով, յաղթեց անոր ու Հռոմայեցիքը մեծ նախանձէ մը ազատեց։

Հ. Երբոր Տրդատ Կեսարիա հասաւ Հայերը ի՞նչպէս ընդունեցան զինքը.

Պ. Ամէն նախարարներ գիմացը ելլելով զինքը նորէն թագաւոր դրին, ու բոլոր Հայաստան մեծ խնամով եղաւ (286)։

Հ. Տրդատ Հայաստանի ախոռներն առաջ ուրիշ ի՞նչ գործողութիւն ըրաւ.

Պ. Եկեղեաց գաւառը գնաց Աստուածոյ շնորհակալութիւն ընելու համար. և հոն խնամեալով որ Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ ու Աստուծոյ որդի՞ն է, շատ շարժարելն նոսա զինքը խոր վերապէ մը մէջ ձգեր տուաւ։

Հ. Ի՞նչպէս Տրդատ Շապուհը վանեց Հայաստանէն.

Պ. Իրեք անգամ Շապուհ պատերազմի ելաւ, բայց իրեք անգամ ալ յաղթուելով Հայաստանը ձգեց ու ինչուան Արտաշատ կան աշխարհը փախաւ։ Ուրիշ շատ յաղ-

թռամիջոցներ և քաջամիջոցներ ընելով Տրդատ բոլոր մեռոակայ ազգերուն սիրտը վախ ձգեց։

Հ. Տրդատ քրիստոնեացողը հալածելուն համար ի՞նչ պատիժ կրեց.

Պ. Որովհետև Հռոմէն եկած Հռիփսիմեան կուսանքներուն համակեց, ինքն ալ Աստուծմէ պատժուելով որպէս առնէ խոզի կերպարանք փոխուեցաւ ու վայրենացաւ. իշխաններուն շատն ալ նոյն պատիժներուն ենթան։

Հ. Ո՞վ բժշկեց զՏրդատը.

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ որ ասնելջրոս տարի վերառը կենդանէն ելաքն ալ գեռ ողջ էր Աստուծոյ հրաշքովը. ու վերադարձնելով բժշկեց զՏրդատը և բոլոր նախարարները, և զԲրիտաս քարոզելով զամէնքը մկրտեց. ինքն ալ Կեսարիա խրկուելով արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ։

Հ. Տրդատ քրիստոնեայ ըլլալէն ետև ի՞նչ մանաւոր գործոզութիւն ըրաւ.

Պ. Լսելով որ Կոստանդիանոս ալ քրիստոնեայ եղեր է, որոյն Գրիգորի հետ մեկտեղ Հռոմ գնայ, ուր որ սուրբն Սեղբեստրոս պապը հրամանատար որ Լուսաւորչայ աթոռն ալ պատրիարգական աթոռ անպռի (319)։

Հ. Տրդատ Հռոմէն գառնալէն ետև ի՞նչպէս գոտաւ Հայաստանը.

Պ. Շապուհ Հիւսիսային ազգաց հետ միացած Հայաստանի վրայ վազեր էր. Տրդատ շուտով մը պատերազմի պատրաստուելով զամէնքը վռնտեց. և Հիւսիսային ազգաց Գելդուէնն անուանով քաջ զօրավարը մէկ զարնուածքով ձիովը մէկտեղ երկու ձգեց։ Այս պատերազմներով Տրդատ բոլոր Հայոց քաղաքները ազատեց Պարսից ձեռքէն՝ որոնց որ բռնութեամբ տիրեր էին։

Հ. Ինչպէս մեռաւ Տրդատ.

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնները, թագուց թագաւորութիւնը ու Լուսաւորչայ Ճգնարանը քաշուելով հոն կը բնակէր. նախարարները կրկին անգամ զինքը կանչելէն ետքը թոյն տուին իրեն. ու ատանկով մեռուցին յիսունվեց տարի թագաւորելէն ետքը (341)։

Հ. Տրդատայ մեռնելէն ետև ինչ խառնուութիւններ եղան Հայաստանի մէջ.

Պ. Արտաշիր ապստամբեցաւ ու Վռամշապուհ անուանով մէկը իրենց վրայ թագաւոր դրին. նոյնպէս նաև Բակուր Սպանեայ իշխանը. իսկ Բզնունիք, Վանանդիք և Աղձնիք իրարու դէմ ելլելով մէկզմէկ ջարդեցին։

Հ. Տրդատայ ով յաջորդեց.

Պ. Նախարարները տեսնելով որ անկարգութիւնները սաստիկ կամենալով Հիւսիսային հետ միացած Տրդատայ որդին խոս-

բով Երկրորդը, թագաւոր դրին Կոստանդ կայսեր հաճութեամբը, որն որ թագ ու ծիրանի խաւրեց։

Հ. Խոսրով Բ. թագաւորելէն ետև ինչ գործողութիւններ ըրաւ.

Պ. Իրեն մեղկութեամբն ու անհոգութեամբը ամենեին յիշատակի արժանի գործողութիւն մը չըրաւ. Դուին (գրա. Բ.-ը) քաղաքը շինեց ու ամրոցը հոն փոխադրեց։

Հ. Խոսրովու առեն ինչ երևելի զօրավար կար Հայաստան.

Պ. Վահան Ամատունին որ մեծ յաղթութիւն մը ըրաւ Շապհոյ և Հիւսիսայնոց աղգաց դէմ, որոնք առաջ Խոսրովու յաղթելով ինչուան Վաղարշապատ հասեր էին։

Հ. Խոսրով որչափ առեն թագաւորեց.

Պ. Մեր տարի. Երեն յաջորդեց իր որդին Տիրան Բ (353)։

ԳԼԱՒ Թ.

Տիրան Ե Արշակ։

Հ. Տիրան ինչ կերպով թագաւորեց.

Պ. Սուրբ Վրթանեսին հետ Սամոսատ գնաց ու հոն Կոստանդ կայսրը թագաւորեցուց զինքը։

Հ. Շապուհ երբոր լսեց Տիրանայ Սուամ պոլ երթալը ինչ ըրաւ.

Պ. Անթիւ զօրք տալով իր՝ Ներսեհ հեզբօրը ձեռքի՝ Հայաստան խաւրեց որ երթայ թագաւորէ Հայոց վրայ. բայց Արշաւիր Կամսարական, որուն որ յանձնուած էր Հայաստանը, նախարարները միացնելով յաղթեց ու վռնտեց զՆերսեհը։

Հ. Տիրան երբոր Հայաստան գարձաւ ինչպէս սկսաւ կառավարել իր տէրութիւնը.

Պ. Բոլորովին անկարգութեամբ ու թուլութեամբ. ան պատճառաւ Շապուհին հետ հաշտութիւն խոսեցաւ ու սկսաւ տուրք տալ անոր ալ ինչպէս Յունաց կուտար։

Հ. Տիրան ինչու համար տուրք Յունիկ հայրապետը ապանեց.

Պ. Վասն զի երբոր Յունիանոս ուրացող կայսրը Պարսից վրայ կ՚երթար, իր պիղծ պատկերը խաւրեց Տիրանայ որ եկեղեցւոյ մէջը կախէ. երբոր տուրք Յունիկ գէմ գրաւ ասս բանիս և պատկերը ոտքին տակը առնելով կոտրեց, թագաւորը բարկութենէն այնչափ ծեծել տուաւ տուրք հայրապետը՝ որ մեռաւ։

Հ. Ինչու համար Շապուհ Տիրանին աչքերը փորել տուաւ.

Պ. Վասն զի Տիրան իր երդմանը գէմ

Յուլիանոսին օգնելը էր Պարսից վրայ երթալու առնելու. Հապուհ ալ առ բանիս վրէժը առնելու համար խաղաղութիւնը իրեն կանչեց Տիրանը ու աչքերը փորել տալով Կուաշ առնը խաւրեց (362)։

Հ. Տիրան ինչպէս մեռաւ.

Պ. Անգամ մը Արշակ իր ազուն յանդիմանութեան թուղթ մը գրեց. Արշակ ալ բարկանալով ապատնեալ առաւ զՀայրը։

Հ. Արշակ իր հօրը տեղը յաջորդելով ինչպէս կառավարութիւն ունեցաւ.

Պ. Հօրը պէս անկարգ և քան զայն ալ գէշ. որով ազգին մէջի եղած ամէն տեսակ խեղճութիւնը և անպիտանութիւնը պատճառ եղաւ և յառաջացուցիչ եղաւ։

Հ. Արշակայ առնչութիւնը երեւելի մարդ կար Հայաստանու մէջ.

Պ. Մեծն Ղէրսէս տուրը Հայրապետը որ Լուսաւորչայ թոռանը թոռն էր, որն որ շատ մեծամեծ բարիքներ ըրաւ թէ ազգին և թէ թագաւորութեան։

Հ. Ինչո՞ւ համար Վաղինոխանոս Արշակայ վրայ պատերազմ բացաւ.

Պ. Վասն զի Արշակ Վաղինոխանոսի խաւրած գեսպանները, որոնք եկեր էին համոզել զԱրշակը Պարսից ծառայութիւնէն ելս կենալու՝ արհամարհեց. ուստի Վաղինոխանոս ալ մեծ պատրաստութեամբ

իր Թէոդոս զօրապետը խաւրեց որ երթայ առ արհամարհանաց վրէժը լուծանէ։

Հ. Ո՞վ ինչեցուց Վաղենտիանոսի բարկութիւնը.

Պ. Մեծն Գերասիս որ Սատանայ գնաց ու իրեն պատնէշի և քաղքը խօսուածքովը թագաւորը հատոզեց, ու ամէն բան կարգի դրաւ։

Հ. Արշակայ ըրած անիրաւ սպանութիւնը որն է.

Պ. Իր Տրդատ եղբօրը Գնէլ որդւոյն սպանութիւնը, ունեցած հարստութիւնը վրայ նախանձելով. որով Գնելայ Փառանձեմ կինը իրեն երկրորդ կին առաւ. ան ալ Ռաբանդատա Արշակին կինը թոռնաւորեց։

Հ. Արշակ ինչպէս շինեցուց Արշակաւան քաղաքը.

Պ. Այս քաղաքը իր անունովը շինել ըսկսաւ և հրաման հանեց որ ամէն անդամ և չարագործ մարդիկ հոն փախչելով ազատին, որով քիչ առնին մէջ բոլոր քաղաքը լեցուեցաւ։

Հ. Այս անիրաւ հրամանին հետևանքէն ինչ եղաւ.

Պ. Նախարարները բարկացած՝ Շապուհը իրենց օգնութիւն կանչեցին, ու անոր օգնութիւնովը Արշակաւանը կործանեցին, բնակիչները ջարդեցին բաց՝ի պզտիկ ազգ-

մէ. և Աբշալոն ալ փոխուցին որ գնաց Վ բաց ապաւինեցաւ։

Հ. Աբշակ Վ բացուցմէ օգնութիւն գտաւ.

Պ. Շատ մը զօրք ժողմած նախարարներուն հետ սկսաւ պատերազմիլ. և երկու տարիի շափ երկու կողմէն ալ մեծ ամեծ քարդեր եղան. ան միջոցին Վաղէս կայսրն ալ Աբշակայ գէմ զօրք խաւրեց ըսելով որ Շապուհին օգներ է Յունաց վրայ գալու ատեն։

Հ. Աբշակ երբոր ամէն կողմանէ թշնամիներէ պաշարուեցաւ, ինչ հնարք մտածեց.

Պ. Ուրիշ անգամներուն պէս նորէն սուրբ Ներսէսի ապաւինեցաւ. ան ալ շատ գժուարութեամբ նախարարները հաշտեցուց թագաւորին հետ, և վերջը Աբշակին որդին Պապը պատանդ առած՝ Սամոսատ Վաղէս կայսեր գնաց. բայց Վաղէս արիւնեան ըլլալով մէկէն քշել տուաւ սուրբ Ներսէսը և դաշինքն ալ չընդունեցաւ։

Հ. Երբոր լսեց Աբշակ սուրբ Ներսէսի պատասխանը ինչ ըրաւ.

Պ. Սկսաւ արձակ համարձակ իր անկարգութիւնները ընել. շատ մարդ անիրաւութեամբ սպաննեց, որով նորէն խռովութիւն ներս սկսաւ։

Հ. Աբշակ ինչպէս բռնուեցաւ.

Պ. Շապուհ օր ունենալով Աբշակայ վրայ՝ նորէն շատ զօրք խաւրեց որոնց հետ

միացան նաև նախարարներն, ու Արշակը ան ասաֆնան նեղը խոմեցին որ Պարսից անձ նաստուր եղաւ։

Հ. Շապուհ ինչ բրաւ Արշակը.

Պ. Լաւ մը յանդիմանելէն ետքը Անյուշ ըսուած բերդը խաւրեց։

Հ. Շապուհ ինչ կերպով եաւէ եղաւ Հայերը արևապաշտ ընելու.

Պ. Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ուրացող նախարարներուն թագ խոստացաւ և շատ զոյք տուաւ ձեռքերնին որ երթան Հայերը արևապաշտ ընեն. անոնք ալ ամէն չարիք հասուցին Հայոց (378)։

Հ. Արշակ ինչպէս մեռաւ.

Պ. Լսելով բոլոր աս եղած չարիքները՝ յուսահատելով ինքզինքը սպաննեց, քսան տարի չափ թագաւորելէն ետքը։

ԳԱՍ Ժ.

ՊԵՐՍ ԵՎ ՎԱՐԱՆԴԱՍ։

Հ. Ի՞նչ կերպով Հայերը աս թշուառու թիւններէն ազատեցան.

Պ. Արծրոյն Ղեւոնդոս ազաչանքովը՝ Մեծն Թէոդոս Արշակին որդին Պապը թագաւոր դրաւ Հայոց վրայ. և Յունաց զօրքով Հայաստան խաւրեց, որոնք եկան Պարսիկները վռնտեցին (381)։

Հ. Ան պատերազմին առնելը սուրբ Ներսէս ինչպէս օգնեց Հայոց բանակին.

Պ. Երբոր երկու կողմէն ալ ահեղ պատրաստութիւնքը կը պատերազմէին՝ սուրբ Ներսէս Նպատակ լեռան վրայ երաւ ու բազկատարած սկսաւ աղօթել, որով քանի մը երաւ ու Պարսից նետերը երկնից վրայ կը դարձնէր. և արևուն դէմը ամպ մը գալով արևը ծածկեց որ Հայերը չինեղէ:

Հ. Ո՞վ լինցուց պատերազմը.

Պ. Սմբատ Բագրատունին, որ Մերուժան Հայ ուրացող իշխանին եանէն վազելով բռնեց զինքը ու տարցուցած շամիրամի երկամը պատկառն գլուխը գնելով ըսաւ. «Առով կը պատկեմ զքեզ, Մերուժան, որ կ'ուզէիր թագաւոր ըլլալ Հայոց». ու այնպէսով ապանեցաւ զինքը, որով և պատերազմը լինցաւ:

Հ. Պապ երբոր թագաւորեց ի՞նչ գործողութիւն ըրաւ.

Պ. Յունաց զօրքը առաւ պարգևով եաւ Հանեց, և ինքը ու նախարարներն ալ մեկտեղ խոյր տուին սրբոյն Ներսեսի որ անեկէ եաքը հաւատարմութիւն ծառայեն Աստուծոյ:

Հ. Ինչո՞ւ համար Պապ սուրբ Ներսեսի թոյլ տուաւ.

Պ. Վասն զի սկսաւ իրեն ըրած չարութիւններքը և անկարգութիւններքը յանեցի-

մնալով. Պապ չկրնալով յայտնի մեռցնել թագն առաւ անոր (383)։

Հ. Ինչպէս համար Թէոդոս կայսրը Պապը սպաննելէ առաւ.

Պ. Վասն զի Պապ կայսերէն ապստամբելով, Յերեմիասնաւ կայսեր զգուշաւորը վռնակց Հայաստանէն. բայց վերջը յաղթուելով բռնուեցաւ. Թէոդոս կայսրն ալ գլուխը կտրել տուաւ երբեք տարի թագաւորելէն ետքը։

Հ. Պարսից տեղը ո՞վ յաջորդեց.

Պ. Թէոդոս Վարազդատ Աշչակունի կարգեր թագաւորեցուց, որ իրեն քաջալիութիւնովը երեսէն եղած էր Յունաց մէջ։

Հ. Վարազդատայ գլխաւոր քաջալիութիւնները որո՞նք են.

Պ. Թագաւոր չեղած՝ անգամ մը հինգ լեռնգրաստայի գէմ երթալով մէկմէկու ետեւէ հինգն ալ սպաննելց. բերդի մը վրայ վազելով տասներեսիմը հոգի ետեւէ ետեւեամ սպաննելց ու ինքը չիմաուեցաւ. գարձեալ քսանուերկու կնոջ գեմ մը վրայէն մէկ շեղով ցաթիկեց։

Հ. Ինչպէս համար Վարազդատ կայսերէն ապստամբեցաւ.

Պ. Տեսնելով որ Յունաց զգուշաւորները կ'ուզեն իր վրայ իշխել՝ շղթանուելով ու բա-

նիս՝ Շապուհին օգնութեանը ուղեց ապրստամբել։

Հ. Ուստի գնաց Վարազդատայ ապստամբութեան խորհուրդը.

Պ. Ձեր. վասն զի լսելով որ կայսրը խնամքը եւ աս բանս, Կոստանդնուպոլիս գնաց որ զինքը արդարացնէ. կայսրը բարկութենէն առանց անանալու մեկնէ քշել առաւ զինքը հեռու կղզի մը։

Հ. Վարազդատայ աքսորութենէն եարը ինչ փոփոխութիւն եղաւ Հայոց թագաւորութեան մէջ.

Պ. Թէոդոս Պատայ երկու որդիքը՝ այսինքն Արշակը ու Վաղարշակը թագաւոր դրաւ Հայոց վրայ, որպէս զի թէ որ մէկը ապստամբի՝ մէկայրը հաւատարիմ մնայ։

Հ. Ա՛ս երկու թագաւորներէն ո՞ր դրին երկնից անթառներէն.

Պ. Արշակ Դուին դրաւ իր անթառը. իսկ Վաղարշակ Երիզա դրաւ, որն որ և ոչ ասրի մը թագաւորելով մեռաւ (388)։

Հ. Վաղարշակին մեռնելէն ետեւ՝ ասրիշ ինչ նոր փոփոխութիւն եղաւ.

Պ. Յոյնք և Պարսիկք որոշեցին նոյն միջոցին որ Հայաստանին Արեւելեան կողմը Պարսից իշխանութեան տակը ըլլայ՝ Արեւմտեանը Յունաց. աս պատճառաւ Արշակ շուքելով Պարսից Ծառայել՝ Յունաց մնաց գնաց ու անթառը Երիզա փոխեց։

ԴԱՍ ԺԱ.

Խոսրով Գ. Վրամշապուհ և Աբգարէս Գ.

Հ. Երբոր Արշակ իրեն նախարարներովը մեկտեղ Յունաց մասը գնաց, Պարսիկք զմի գրին թագաւոր իրենց մասին մէջ.

Պ. Խոսրով անուանով մեկը Արշակուն նեաց ցեղէն:

Հ. Ինչո՞ւ համար Արշակայ և Խոսրովու մէջ պատերազմ բացուեցաւ.

Պ. Վասն զի քանի մը նախարարներ Արշակայ կողմէն Խոսրովին մասը անցնելու առեղծին, յարձրակեցին Արշակայ գանձերը և Խոսրովին տարին: Արշակ աղաչանքով ուզեց իր գանձերը, բայց երբոր Խոսրով մանիկ չըրաւ, պատերազմ բացուեցաւ մէջերնին:

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Երկու կողմանէ ալ սատակ ջարդ ըլլալին եռքը՝ Խոսրով յաղթեց: Արշակ քիչ մը առեն ալ ապրելէն եռքը մեռաւ:

Հ. Արշակայ տեղը զմի թագաւոր գրին Յոյները.

Պ. Թագաւորին տեղ յոյն կոմս մը գրին ու Դազաւոն քաջ Հայ իշխանն ալ սպարապետ:

Հ. Յունաց բաժնին Հայերը աս բանս երբոր տեսան ի՞նչ ըրին.

Պ. Ղափարաբնակները ապաշէցին Խոսրովու որ զիրենք ալ իր մասին մէջը ընդունի և իրենց առջի կալուածները ապա. Խոսրով յանձն առաւ, և առով զօրացած կայսրը խօսք տուաւ որ բոլոր հարկը կը վճարէ թէ որ ինքը իշխէ Յունաց բաժնին ալ. կայսրն ալ հաւանեցաւ։

Հ. Ինչո՞ւ համար Շապուհ Խոսրովին վրայ խաբեց իր Արտաշիր որդին.

Պ. Ղափարաբնակներն ոմանք թշնամութիւն ունենալով Խոսրովին հետ, գացին ասուս ամբաստանութիւն ըրին Շապուհին թէ Խոսրով կ'ուզէ ապստամբիլ. ան ալ շատ զօրքով իր Արտաշիր որդին խաբեց։

Հ. Արտաշիր ի՞նչ կերպով բռնեց Խոսրովը.

Պ. Խոսրով տեսնելով որ ամէն կողմանէ անօգնական մնաց՝ Արտաշիրի քով գնաց. ան ալ շղթայի զարկած Անդուշ բերդը խաբեց ու Խոսրովին Վռամշապուհ եղբայրը թագաւորեցուց (392)։

Հ. Վռամշապուհ ի՞նչպէս թագաւորութիւն ըրաւ.

Պ. Խաղաղութեամբ ու խելացի կերպով, և իրեն հաւատարիմ հպատակութեամբը Պարսից Վռամկրմանն թագաւորին ալ շատ սիրելի եղաւ։

Հ. Վասիլիսան ինչ փոխարէն ըրաւ Վասիլիսային հաւատարմութիւնը.

Պ. Իր խոսքով էրիսիրը Մեծուշ թերդէն հանեց ու զատուով կը պահէր:

Հ. Վասիլիսան ասենը ինչ ուսումնական յառաջադիմութիւն ըրաւ ազգին.

Պ. Սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ տեսնելով ազգին խաղաղութիւնը և Վասիլիսային ուսումնասիրութիւնը, եաւէլ եղան հայերէն գիրերը գտնելու, ու գրչագներ բանալով ազգին ուսումնական կենդանութիւն տուին (406):

Հ. Վասիլիսան օրչափ ասենը թագաւորեց.

Պ. Քսանվեցիկ տարի՝ ամենայն բարեկարգութիւն և ուղղութիւն ընելով:

Հ. Վասիլիսային տեղը ով թագաւորեց.

Պ. Ղորէն խոսրով թագաւորեց էրկրորդ անգամ, որովհետև որ Վասիլիսային Արտաշէս որդին դեռ պզտիկ էր:

Հ. Խոսրով էրկրորդը էրկրորդ անգամ օրչափ ասենը թագաւորեց.

Պ. Մէկ տարի միայն ու մեռաւ (414):

Հ. Խոսրով էրկրորդէն ետքը ինչ պատահեցաւ Հայաստանի ասկերութիւնը եղաւ.

Պ. Վասն զի Յազկերտ ուզելով որ Հայե-

ը կրակապաշտ ընէ, իր որդին Շապուհը Հայոց թագաւոր դրաւ։

Հ. Ի՞նչ կերպով Յազկերտի աս խորհուրդը առաջ գնաց.

Պ. Քանի մը տարիէն Յազկերտ հիւանդացաւ. ան պատճառաւ Շապուհ ալ Պարսկաստան գնաց որ թագաւորութիւնը առնէ. բայց Յազկերտ մեռաւ ու ինքն ալ ետ դարձաւ։

Հ. Շապուհին երթալէն առաջ նախարարները ի՞նչ ըրին.

Պ. Շապուհին թողուցած զօրացը վրայ վազեցին ու ապէկ ջարդ մը տալով փախուցին. բայց Վռամ Պարսից թագաւորէն վախնալով ամէնքն ալ ցրուեցան ու իրենց բերդերը քաշուեցան։

Հ. Վռամ խոսրովին ետքը զո՞վ թագաւոր դրաւ Հայոց վրայ.

Պ. Ազգերնիս լաւ մը չարչարուելէն ետքը, թագաւոր դրաւ Վռամշապուհին Արտաշէս որդին տասներորդը տարուան ու անուն ալ փոխելով Արտաշիր դրաւ։

Հ. Արտաշէս կամ Արտաշիր ինչպիսի կառավարութիւն ունեցաւ.

Պ. Անկարգ ու ժոլի ըլլալով ամենուն ատելի եղաւ։

Հ. Ի՞նչպէս վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը.

Պ. Նախարարքն էր Հանձրացած Աբրահամ ամենարդարութիւնքն, Վասն զի աղաչէին որ թագաւորութիւնն վերցնէ ու իրենց վրայ պարսիկ մարզպան մը դնէ. Վասն զի կատարեց խնդիրքնին։

Հ. Ինչպէս մէկը որ թագաւորութեան վերցուելուն դէմ կենայ.

Պ. Սուրբ Սահակ հայրապետը շատ ջանաց նախարարներուն չար միտքը փոխել, նաև Վասակայ առջևն ալ պաշտպանեց Աբրահամը. բայց Վասակ մոխիկ ջնելով բանտ դնել տուաւ զինքը ու Աբրահամն ալ սպանեց (428)։

Հ. Աբրահամ որչափ տարի թագաւորեց.

Պ. Վեց տարի. պարսուելէն վերջն ալ քանի մը տարի ապրեցաւ ու մեռաւ։

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԱՍ ԺԲ.

ՎԷՀՄԻՀՐՇԱՊՈՒՀ Ե ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՊԷՐԱՂԸ։

Հ. Ի՞ՐՀԱԿՈՒՆԵՔՑ թագաւորութիւնը վերնալէն եւեւ Հայաստանի ո՞վ կ'իշխէր.

Պ. Պարսից թագաւորը իր կողմէն իշխան մը կը խրկէր որ Հայաստանի հարկը ժողվէ, և հոն նստելով զգուշանայ աշխարհքին. ասոր իշխանը Մարզպան կ'ըսուէր։

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մարզպանը.

Պ. Վէհմիհրշապուհ անունով պարսիկ մը։

Հ. Ի՞նչ աչքով կը նայէր ասիկայ Հայոց ազգը.

Պ. Բնութեամբ լաւ մարդ ըլլալով խիստ ալէկ նայեցաւ ազգը, տասնըչորս տարի։

Հ. Վէհմիհրշապուհին տեղը ո՞վ գրուեցաւ մարզպան.

Պ. Վասակ Սիւնեաց իշխանը, որ իր աղջիկն ամենայն շարիք հասուց (442)։

Հ. Ի՞նչ պատճառաւ Յաղկերտ պարսիկ մարզպանին տեղ Վասակը գրաւ.

Պ. Որովհետև զի ամենայն Հայոց սիրտը վասակի և վերջը ուղածը ընէ։

Հ. Ուրիշ ինչ հնարք բանեցուց Յաղկերտ Հայերը կրակապաշտ ընելու.

Պ. Հրամայեց հանեց որ Հայերը իրենց զոյգ տան, որովհետև զի ասով ազգին մեծերը և պատերազմական զօրութիւնը հեռացընէ որ չկարենան իրենց դէմ գնել։

Հ. Հայերը Յաղկերտին հրամանը կատարեցին.

Պ. Միայն խորհրդով բազմութիւն գումարեցին, որոնց հետ մէկտեղ գացին խել մը նախարարներ ու քահանաներ։

Հ. Ի՞նչ ըրաւ Յաղկերտ առ զօրքերը.

Պ. Հոնց վրայ պատերազմ տարաւ, ուր որ վեց եօթը տարի պատերազմ յոդնեցընելէն ետև, սկսաւ զամէնքն ալ կրակապաշտութեան տխրել։

Հ. Նախարարներէն ոմն յայտնի թագաւորին հրամանին դէմ գնելով նահատակուեցաւ.

Պ. Գարեգին քաջ նախարարը որ թագաւորին բուժներուն դէմ գնելով խաչը ըրաւ գլխին ու նահատակուեցաւ։

Հ. Ուրիշ որո՞նք նահատակուեցան.

Պ. Ընտրեմ Գնունի և Մանուճիհը Ռըշտունի իրենց զօրքերովը. որոնք տեսնելով Յաղկերտին անօրէն հրամանը փոխեր էին. բայց Յաղկերտ ետունէն զօրք ղրկեց ու զամէնքն ալ թրէ անցընել տուաւ։

Հ. Ան միջոցին որ նախարարներէն ոմանք Պարսկաստան էին՝ Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր.

Պ. Յաղկերտ Դենշապուհ անուն մի քրիստոնէ մը խաւրեց՝ որ Հայերը շատ նեղեց ու բաց ասկէ Թուղթ մ՚ալ գրել տուաւ Հայոց՝ ստիպելով որ կամ պատասխանը տան և կամ Պարսից կրօնքը ընդունին. Յովսէփ կաթուղիկոս ալ ի միասին հաւանելով թղթին պատասխանը գրեց։

Հ. Յաղկերտ երբոր տեսաւ թղթին պատասխանը ի՞նչ ըրաւ.

Պ. Սատանի բարկացաւ ու հրաման գրեց որ բոլոր ազգին մեծամեծ նախարարները Պարսկաստան գան։

Հ. Նախարարները հնազանդեցա՞ն.

Պ. Ճարներնին հատնելով եկան գացին՝ որոնց գլխաւորներն էին Վասակ և Զարգան։

Հ. Երբոր նախարարները Պարսկաստան հասան՝ Յաղկերտ հետևրնին ի՞նչպէս վարուեցաւ.

Պ. Մէկէն բանտ դնել տուաւ ու ակը-

աստ ոտիպէլ որ կամ հաւատքնին ուրանան ու իրենց առջի պատուոյն հանին, և կամ մեռնին։

Հ. Ղահարարմնելը աս երկուքէն ո՞ր յանձն առին.

Պ. Տեսնելով որ թէ որ իրենք մեռնին Հայաստան ոչի տակ կ'երթայ, դրսուանց յանձն առին ու արևու երկրպագութիւն ըրին, և շատ մոգերով Հայաստան դարձան։

Հ. Հայերը երբոր խնացան մոգերուն դա՞ ը ինչ ըրին.

Պ. Սուրբ Ղևոնդ և ուրիշ աստուածընտիր քահանաներ Ժողովրդեան հետ միացած վրանին վազեցին ու լաւ մը ջարդ տալով լեղապատառ փախուցին մոգպետը իրեն մոգերովը։

Հ. Ի՞նչ կերպով հանդարտեցաւ Ժողովուրդը.

Պ. Սուրբ Վարդան Յովսէփ կաթուղիկոսին ոտքը էյնալով իրեն մեղայը թողութիւն խնդրեց. իսկ Վասակ ասուիծամբ հանոզեց քահանաները որ առ Ժամն գէմ չդնեն մոգերուն՝ որպէս զի Յարկերուն առջև յանցաւոր չանպուին, ու վերջը կամաց կամաց վռնան։

Հ. Վասակայ աս խորհուրդը ի՞նչ հետևանք ունեցաւ.

Պ. Ղահարարմնելը տեսնելով որ կամաց

կամաց կրոնապաշտութիւնը կը հաստատուի Հայաստանի մէջ ու Վասակ Պարսից հետ միացած զարիքներ կը հասցնէ Հայոց, փրան վազեցին փախուցին Պարսիկները ու գինքն ալ բռնեցին. բայց աւելորդին վրայ երդում ընելուն համար՝ նորէն ազատ թողուցին։

Հ. Հայերը իրենց աստուածութիւններուն մէջ ուրիշներէ օգնութիւն չուզեցին.

Պ. Յունաց Թէոդոս փոքր կայսրէն օգնութիւն խնդրեցին, բայց երբոր անիկայ մեռաւ, իր յաջորդը Մարկիանոս չոգնեց։

Հ. Երբոր Հայերը յոյսերնին կտրեցին Յոյներէն ի՞նչ ըրին.

Պ. Հարիւր հազարի չափ մարդիկ Շահապիվանի քաղաքը ժողվուելով իրեք գունդ բաժնեցին բոլոր զօրքը։

Հ. Ա՛ գունդերուն զօրավար որո՞նք դրուեցան.

Պ. Պարսից դէմ կենալու գնդին զօրավար դրուեցաւ Եղիշապուհ Արծրունի. երկրորդին Վարդան որ Աղուանից օգնութիւն գնաց. ու երրորդ գունդը ուրիշ Վասակայ Հայաստանը պահելու համար։

Հ. Վարդան Աղուանից երկիրը ի՞նչ քաջութիւն ըրաւ.

Պ. Պարսից զօրքերը փախուց՝ մոգերը

ջարդեց ու հանդարձակ քրիստոնէութիւնը պաշտել տուաւ։

Հ. Ան միջոցին որ Վարդան Աղուանից կողմերն էր, Վասակ ի՞նչ կ'ընէր Հայաստան.

Պ. Հաւատքը ուրացած նորէն սկսաւ եկեղեցիները աւրել ու կրակապաշտութիւն խոմել Հայաստանի մէջ։

Հ. Յազկերտ ամենելով Հայոց պատրաստութիւնները ի՞նչ ըրաւ.

Պ. Մի հրամանով պարսիկ հազարապետը խաւրեց որ երթայ պատերազմը ընոյնի, որուն կողմը անցաւ հանդարձակ Վասակ ու ինքը վրան առաջ պատերազմին հոգը ամէն շարիք կ'ընէր։

Հ. Հայերը վերջի պատերազմին ի՞նչ պէս պատրաստուեցան.

Պ. Վարդանայ հրամանաւը վանդաստան հազար հոգի ժողվուեցան, և պատրաստուեցան Աւարայրի գեղին քովերը։

Հ. Ի՞նչպէս ընոյաւ առ վերջի պատերազմը.

Պ. Մեծն Վարդան և իրեն ընկերները շատ քաջութիւններ ընելէն ետքը՝ Վարդան քաջութեամբ զարնուելով մեռաւ, և երկու հարիւր ինեսուն հոգի ալ իր ընկերները մեռան նոյն օրը. բայց ասոնցմէ նոյն օրը բարդ հաւատքի և հայրենեաց վրայ

մեռնողներուն թիւը եղաւ հազար երեսուն-նրվեց հոգի (451)։

Հ. Վասակ ուրիշ ի՞նչ չարիք հասուց Հայոց.

Պ. Ձեռքը ինկածը կամ կը սպաննէր և կամ հաւատքը ուրացնել կուտար. Նոյնպէս բռնեց ան պատուաւոր քահանաները որոնք տուրք Ղևոնդի անուանովը Ղևոնդեանք ըսուեցան ու շղթայակապ կը պահէր, որ վերջը Պարսկաստան տարուելով հոն նահատակուեցան։

Հ. Վասակ իրեն չարչարեան պատիժը ի՞նչպէս գտաւ.

Պ. Յանցաւոր գտնուելով Յազկերտի առջև որ առ ամէն չարիքէն եռքը չկրցաւ Հայերը արեւապաշտ ընել, բանտը գրուեցաւ ուր որ որդնոտելով մեռաւ ու կորսուեցաւ։

ԴԱՍ ԺԳ.

ԱՐՏԱՇԷՍ Ե ԱՐՏԱՇԱՏ Ե ՎՐԱՆ ԵՐԵՔ ՊՕՊԷՐՊԷՆԷՐԸ։

Հ. Վասակին տեղը ո՞վ գրուեցաւ մարզպան.

Պ. Արտաշիր, որ խել մը քահանաներ բռնեց ու շղթայի զարկաւ։

Հ. Ասորոմիզոյ առնելը քրիստոնէութիւնը ի՞նչ վիճակի մէջ էր.

Պ. Ան արտաքս հրաման առաւ որ ամէնքը իրենց հաւատքը պահեն, թէպէտ և կրօնաւորներն ալ սպիտակ չէին։ Ան ընելով սկսաւ նախարարները ստիպել որ Յազկերտին երթան առանց վախի՝ երդումնաղով որ իրենց վանդ մը չըլլար։

Հ. Նախարարները երբոր Պարսկաստան հասան՝ Յազկերտ ի՞նչ կերպով ընդունեցաւ զիրենք.

Պ. Մեկէն բանտ փնտռեալ տուաւ ու սկսաւ զիրենք ստիպել որ հաւատքնին ուրանան. բայց և ոչ մէկը թողցաւ հաւատքէն։

Հ. Նախարարները ո՞րչափ առնն բանտը կեցան.

Պ. Երկար առնն բանտը կենալէն և շատ տանջանքներ քաշելէն ետև՝ Շղոմշապուհ անուամբ իշխանին աղաչանքովը ազատեցան բանտէն ու Պարսկաստան կը կենային։

Հ. Դեռ ո՞րչափ առնն ալ Պարսկաստան կեցան նախարարները.

Պ. Ութը տարի ալ կենալէն ետև երբոր Ասորվեստան մարզպան կուգար Հայաստան, իրենք ալ մեկտեղ եկան (464)։

Հ. Ո՞վ էր Սեծն Վասակ.

Պ. Սեծին Վարդանայ Հմայեակ երդիքը մեծ տղին էր։

Հ. Ինչպէս համար Վահան հաւատքը ուրացաւ.

Պ. Վասն զի իրեն անհիւ կուսակցութիւններովը ամենուն սիրելի էր. ուստի Պարսկաստան գնուելոյ ուրացեալ նախարարներըը վրան նախանձելով զինքը ամբաստանեցին Պերոզի. Վահան ալ անոր աչքին ցնդելու համար հաւատքը ուրացաւ:

Հ. Վահան ի՞նչպէս նորէն քրիստոնէութեան հաւատքը դարձաւ.

Պ. Լսելով որ Վախթանկ Վրաց թագաւորը Պարսիկներին ապստամբեր է, իրեն հետ եղած Հայերն ալ յորդորեց որ իրենք ալ ապստամբին ու նորէն քրիստոնէութեան համար պատերազմին:

Հ. Վահանայ ըրած առաջարկութիւնը յանձն առին.

Պ. Շատերը յանձն առին ու Վահանը ապարատեա գրին՝ և Սահակ Բագրատունին ալ մարզպան Ատրպատականայ անոր՝ որն որ պատերազմի մէջ ապանեցին (481):

Հ. Վահան երբոր ուրիշ նախարարներու ալ խնայուց իրեն ապստամբելը ի՞նչ ըրին անոնք.

Պ. Փոխանակ օգնելու՝ ուրիշ գացողներու ալ արգելք եղան ու եռանդնէն վազելով խափանեցին, բայց քանի մը հոգի իրեն հետ միաբան կեցան:

Հ. Պերոզ երբոր լսեց Վահանայ ապրստամբիլը ինչ ըրաւ.

Պ. Ամենեսեան հին ձեռքովը շատ զօրք խաւրեց ապստամբելով որ Վահանը ողջ բռնեն։

Հ. Վահան Ամենեսեան դէմ քանի հոգւով գնաց.

Պ. Խիստ քիչ հոգւով, Յովհան Մամիկոնեան ալ հետը առած. անոր համար քաջութեան հետ ատուածային զօրութիւնը և հաւատքը օգնական առած՝ մեծ ջարդ մը տուաւ թշնամեաց բանակին։

Հ. Ո՞վ խաւրուեցաւ նորէն Վահանայ դէմ.

Պ. Մեհրանը, Հայոց և Վասպուրականի Վրաց թագաւորին դէմ։

Հ. Վահան ինչո՞ւ համար Վրաստան գնաց.

Պ. Վասն զի Վասպուրականի օգնական ուզեր էր Հայերէն Պարսից դէմ գնելու. Վահան ալ գնաց երբեն խոստմանը դէմ չընելու համար։

Հ. Վասպուրականի ինչ խարդախութիւն ըրաւ Վահանայ.

Պ. Մեհրանայ հետ խօսքը մէկ ընելով, Վահանը անոր ինչպէս ուզեր էր, ինչուան որ Մեհրան իր անթիւ զօրքերովը հասաւ ու Վահան յանկարծակի գալով շկրցաւ պատրաստուիլ որով և յաղթուեցաւ։

Հ. Ի՞նչ երեւելի մարդիկ մեռան այս պատերազմիս մէջ.

Պ. Սահակ Բագրատունին ու Վասակ Վահանայ եղբայրը. իսկ մեռացածներին շատը Միհրանայ կողմը անցան ու մեռց հարիւր հոգի որ Տայոց կողմերը փախան:

Հ. Միհրանին ամէն ոմ ապարդարեա գը-բուեցա.

Պ. Զարմին Հազարաւուխտ որ նոյնպէս չկրցա Վահանայ անարդարութիւնը յարիթել:

Հ. Վահան Հազարաւուխտին ձեռքին ի՞նչպէս ազատեցա.

Պ. Հազարաւուխտ խնամեալով որ Վահան Դուին փախեր է, գնայ Դուինը պաշարէց. Վահան չուզելով որ իր պատճառաւը քաղքին մը հասնի, երեն քիչ մարդիներ-ովը եկա քաղքին ու Պարսիկներովը Ճգքելով գնայ Շապուհ գաւառը:

Հ. Հազարաւուխտին ամէնը ոմ խրկուեցա.

Պ. Շապուհ Միհրանեան պարսիկը, որ խնամեալով Վահանայ ուր ամէն ըլլալը՝ նկա-պաշարէց:

Հ. Վահան ի՞նչ կերպով ազատեցա Շապուհին ձեռքին.

Պ. Խել մը գեղացոց ձեռքը վահաններ ու բահեր տալով իր կեցած ամէնը շարէց,

ու ինքը ուրիշ ճամբով Պարսից վրայ վազեց գիշերանց, ու խռովութիւն ձգելով Պարսից բանակին մէջ վեց հարիւր հոգի չափ մեռուց ու ճնացածներն ալ փախան։

Հ. Վահան ուրիշ ի՞նչ քաջութիւններ ըրած ունի.

Պ. Ընդամ մը երեսուն հոգւով Շապուհին գէմ ուրիշ մեծ յանդգնութիւն մ'ալ ըրաւ։ Նոյնպէս յանկարծակի վրանին վազելով երբոր անոնք անփոյթ կեցեր էին սեմնելով Վահանին զօրացը քիչութիւնը։

Հ. Պարսիկք ի՞նչ կերպով Վահանայ հետ հաշտուեցան.

Պ. Երբոր Պերոզ մեռաւ ու Վաղարշ իր եղբայրը թագաւորեց, ասիկայ լսած ըլլալով Վահանայ քաջութիւնները ու իրեն արդար պահանջմունքը, ուզեց հաշտուիլ հետը. ուստի Դիմոր անուամբ խաղաղասէր մարդը խրեց որ երթայ աս բանս կատարէ։

Հ. Ի՞նչ կերպով կատարուեցաւ աս հաշտութիւնը.

Պ. Վահան գաշինք դրաւ Դիմորայ հետ, որոնց գլխաւորն էր թէ քրիստոնէութիւնը ազատ պաշտուի Հայաստանի մէջ ու Պարսիկք բնաւ չխառնուին. Դիմոր յանձն առաւ. ան առնն Վահան գնաց Պարսից գուռը ու նորին երդում առաւ թագաւորին, և ինք-

հանուր ապարատեռ գրուելով գարձաւ Հայաստան։

Հ. Ի՞նչպէս մարզպան եղաւ Վահան.

Պ. Երբոր Ընդեկան մարզպանը Պարս կաստան գարձաւ այնչափ գովեց Վահանը, որ Վաղարշ ալ զինքը մարզպան գրաւ, ու Վահանին Վարդ եղբայրն ալ ապարատեռ։

Հ. Ինչո՞ւ համար վերջը նորէն Վահանին տեղը Պարսիկ մարզպան գրուեցաւ.

Պ. Երբոր Վաղարշ մեռաւ, Պերոզին որդին Կաւատը թագաւորեց. ասիկայ մոգերէն յորդորուած Վահանայ տեղ Պարսիկ մարզպան մը խաւրեց և հետն ալ շատ քուրմեր. ասով նորէն խռովութիւն մնկաւ Հայաստան։

Հ. Հայերը ընդունեցան նոր մարզպանը ու քուրմերը.

Պ. Վահան ուրիշ նախարարաց հետ միաբանելով վազեց նոր մարզպանին վրայ ու վռնտեց Հայաստանէն։

Հ. Վահան ինչպէս առին մարզպանութիւնը։

Պ. Քանիովեց տարի ամէն գովելի հանգամանքներով (491)։

ԴԱՍ ԺԴ.

Վարդեն Խնլուան Սմբատին Կիրապաշտութիւնը։

Հ. Վահանին անդը ով գրուեցաւ մարդ սպան.

Պ. Վարդ Վահանին սպան եղբայրը որ շարս տարին մարդասպանութիւնն թեկաւ, վրան սուտ ամբաստանութիւնք ընելնուն համար։

Հ. Վարդին անդը ով գրուեցաւ.

Պ. Բուրդան անունով անպիտան արարածը որ իրեք տարի Հայերը շատ նեղից։

Հ. Ի՞նչ մարդ է Արժեժ Գնունի.

Պ. Կարիճ մարդ մին է, որ երբար Հոգաստանի վրայ վազելով աւերմունք կ'ընէին, գէմերնին ելլելով յաղթեց անոնց ու վանեցաւ Հայաստանէն։

Հ. Արժեժ իրեն աս արդեանցը համար ի՞նչ փոխարէն ընդունեցաւ Կաւատէն.

Պ. Բուրդանին անդը մարդասպան գրուեցաւ՝ որին որ երեսուն տարի մարդասպանութիւն թրաւ։

Հ. Արժեժին անդը որո՞նք մարդասպան գրուեցան.

Պ. Դէնեշատուհ պարսիկը որ Հայերը շատ կը նեղէր հաւատքի համար, որն որ Մովսէս կաթուղիկոսին ազաչանքովը փոխուելցաւ ու անոր ուրիշ մը եկաւ. վերջը գրկուելցաւ Սուրէն ճիհը որ Հայերը շատ նեղեց։

Հ. Ան միջոցներուս ի՞նչ նշանաւոր փոփոխութիւն բան եղաւ Հայաստանի մէջ.

Պ. Մովսէս կաթուղիկոս Հայոց ատենքը նորոգելով նոր թուականս հաստատեց, ուստի սկսեալ ինչուան հիմա 1298 տարի է։

Հ. Սուրէն մարզպանը ի՞նչպէս ապանեցաւ.

Պ. Սուրէն՝ Վարդան Մամիկոնեանին Մանուել եղբայրը ապանեց. Վարդան աս բանիս վրայ բարկացած՝ զոյգ ժողովց վազեց Դաւին քաղքին վրայ ու քաղաքը առնելով Սուրէնը ապանեց ու զոյգն ալ Ջարդեց ու ցրուեց (364)։

Հ. Երբոր Վարդանայ աս ըրած գործքը հատաւ խոսրով Պարսից թագաւորին ականջը, ի՞նչ ըրաւ խոսրով.

Պ. Շատ զոյգ խաւրեց Վարդանայ վրայ. բայց Վարդան վարպետութեամբ ապատրազելով յաղթեց անոնց ու ցրուեց։

Հ. Երբոր խոսրով աւելի մեծ բանակ մը խաւրեց, Վարդան ի՞նչ ըրաւ.

Պ. Տեսնելով որ իր քովինները շատը նոգիսի զատուելցան, ինքն ալ Սամսոր

գնաց և Յուստինիանոս կայսրէն օգնութիւն ուզէց։ Յուստինիանոս ալ տուաւ։

Հ. Վարդան Յունաց օգնականքը կը ցանէ Պարսից յաղթել։

Պ. Խոսրով ինքը անձամբ հարիւր քառասուն հազար զօրքով Վարդանայ և Յունաց վրայ եկաւ. և երկու կողմէն ալ շատ ջարդ ըլլալէն ետև, ներէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան։

Հ. Երբոր ներէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան ով եղաւ մարզպան.

Պ. Ճիշդ Վզոն խաղաղասէր Պարսիկը՝ տասնըվեցնգ տարի։ Ասիկայ էն վերջի Պարսիկ մարզպանը եղաւ (578)։

Հ. Ճիշդ Վզոնին տեղը ով եղաւ մարզպան.

Պ. Սմբատ Բագրատունի իրեն քաջութիւններուն համար, որն որ ութը տարի մարզպանութիւն ըրաւ.

Հ. Իրեն ով յաջորդեց.

Պ. Դաւիթ Սահառունի որ քսանըչորս տարի մարզպանութիւն ընելէն ետքը, վախնալով Պարսիկներէն թողուց իշխանութիւնը և Կոստանդնուպոլիս փախաւ։

Հ. Դաւիթ Սահառունիին տեղը ինչ Հշատակի արժանի գործողութիւն եղաւ Հայաստանի մէջ.

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանին և Գայլ Վահանին Պարսից հետ եղած պատերազմները։

Հ. Ի՞նչ պատճառաւ եղան սա պատերազմները.

Պ. Խոսրով պատճառաւ մը թշնամանալով Մուշեղայ հետ, վրան պատերազմի ելաւ. Մուշեղ ալ իրեն օգնութիւն կանչեց Վահան իր ազգականը, որ իր վարպետութիւններուն համար Գայլ ըսուէցաւ։

Հ. Գայլ Վահանին քաջութեանցը ու վարպետութեանցը ո՞վ հետևող եղաւ.

Պ. Իր որդին Սմբատը որ Պարսից շատ անգամ յաղթեց ու շորս երեսէն զօրավարներ ապանեց։

Հ. Դաւթի Սահառունիին տեղ ո՞վ մարզպան դրուեցաւ.

Պ. Վարազփրոց Սմբատ Բագրատունիին որդին, որ եօթը տարի մարզպանութիւն ընելէն ետքը իր ընտանիքովը Սասունցի փախաւ։

Հ. Ո՞վ եղաւ առջի կիւրապաղատը.

Պ. Դաւթի Սահառունին։

Հ. Ի՞նչպէս եղաւ որ Դաւթի կիւրապաղատ խրկուեցաւ.

Պ. Այս միջոցներուն Պարսից մէջ խռովութիւն իյնալով, հայերը Յոյներուն ա-

պատմեցան ու իրենցմէ իշխան մը ուզեցին. անոնք ալ Դաւիթը խուրեցին Կիւրապատ զատ անուանելով որ իշխանութիւն անուն մըն է. բայց չորս տարին նորէն Հայերը վռնտեցին զԴաւիթը։

Հ. Պարսիկներուն զատ ուրիշ ինչ թշնամի ունէր վաղէը Հայաստանի վրայ առ միջոցներուն.

Պ. Հոգարացիք՝ որ Պարսիկներուն առէլի շատ չարիք հասուցին Հայոց։

Հ. Հոգարացւոց արշաւանացը եղան նախապատճառները որ գէմ գնեն.

Պ. Թէոդորոս Ռշտունի և Վահան Կամսարական ուզեր հազար զրպով (676)։

Հ. Վահանին այսպէսի ազգասիրական գործողութիւնը որոնք արդէք եղան.

Պ. Երբոր Հոգարացւոց գէմ պատերազմի ելեր էր, Սահուա Ամնունեաց ու ուրիշները Հոգարացւոց կողմը անցնելով սկսան Տաճիկներուն հետ մեկտեղ Հայերը ջարդել և այսպէսով ցրուեցին Վահանայ զօրքերը։

Հ. Հոգարացիք Վահանայ զօրքը ջարդելէն ետև ինչ ըրին.

Պ. Շատ մարդ թրիք անցնելէն ետև, երբ առնելիներ հազար հոգի ալ գերի տարին։

Հ. Հոգարացւոց ետ ըրած ջարդէն

եռաև ոմ իրկուեցաւ կիւրապաղան Յունաց կողմանէ.

Պ. Վարազտիրոց որ տարին մը մեռաւ և իրեն յաջորդեց իր ազգն Սմբատ։

ԴԱՍ ԺԵ.

Սմբատ Գ-ի պատերազմը Ինքնան Բոգրատունեաց Բագրատ Գանձակեցի։

Հ. Սմբատին կիւրապաղատութեան ատենն Հայերը հանդիսաւոր անցուցին.

Պ. Սմբատին կիւրապաղատութեան երրորդ տարին Հագարացիք վազեցին Հայաստանի վրայ ու շատ կոտորածներ ըրին. Դամասարանները միապան հեռացանցին Հագարացոց և Յունաց իշխանութենէն եկան, որոնց Յոյները շատ նեղացան (653)։

Հ. Սմբատին ատեն ոմ եղաւ իշխան.

Պ. Համազասպ Արծրունեան որ քիչ մը առնէին Դորէն Յունաց հեռանալով ու Դուինայի Պատրիկ ըսուած իշխանութիւնը առաւ։ Ամիրապետը բոլոր իրեն քովն եղած Հայ զորաւորները թրիչ անցնել տուաւ. ասոր յաջորդին Դորէն հեռանցին Հայերը, ու քիչ առնէին Համազասպն ալ մեռնելով իրեն ատեն զորաւոր դրուեցաւ իր եղբայրը Գրիգոր։

Հ. Գրիգոր ոչչափ առնն զորաւոր եղաւ ու իրեն ոմ յաջորդեց.

Պ. Քառասնչորս տարի. ու վերջը պատերազմի մէջ մեռաւ։ Երկու տարի տակն ու վրայ եղաւ Հայաստան, ինչուան որ Աշոտ Բագրատունին զօրանալով Թշնամեաց դէմ գրաւ Հագարացւոց հարկ տալով։

Հ. Աշոտ ո՞ր չափ առնէ պատրիարքութիւն ըրաւ.

Պ. Յոյները իմանալով որ Հայերը Հագարացւոց հարկատու եղեր են, շատ զօրք խաւրելով մեծամեծ աւերմունքներ ըրին Հայաստան. Հագարացիք ալ ընդհակառակն կարծելով որ Հայերը Յունաց հնազանդեր են՝ իրենք ալ նոյնպէս շատ վնասներ հասուցին Հայոց. Աշոտ ասոնց դէմ գրաւ քաջութեամբ, բայց ինքն ալ զարնուելով մեռաւ իրեք տարի իշխելէն ետքը (692)։

Հ. Աշոտին մեռնելէն ետև ո՞վ իշխեց Հայոց.

Պ. Հագարացիք, որոնք Քրիստոսի 693 թուականին սկսան Հագարացի իշխան մը խաւրել Ատիկան անունով, որոնց առջին եղաւ Աբդլա։

Հ. Աբդլային առջի գործողութիւնը ո՞րն եղաւ.

Պ. Նախարարները և Սահակ կաթողիկոսը բռնեց ու Դամասկոս խաւրեց։ Քիչ մը առնելէն Սմբատ Բիւրատեսը վռնտեց զինքը Հայաստանէն Յունաց օգնութեամբ։

Հ. Հայաբաղիք Սմբատայ աս ըրած գոր-
ծողութիւն վրէժը ինչպէս հանեցին.

Պ. Մահմատ անուն զօրավարը խաբե-
ցին որ շատ ձիաս հասուց. ու վերջը Սահակ
կամուրջիկոսին աղաչանաց թղթովը խա-
զաղութիւն ըրաւ ու գերիները ազատեց:

Հ. Ղափարտաց ազատելէն ետև Կաշմ
ոստիկանը ինչ չարիք հասուց Հայոց.

Պ. Ղափարտիները և ուրիշ ազգին մե-
ծերը Ղափլուանի եկեղեցւոյն մէջը այրել
տուաւ (704):

Հ. Կաշմին ետքը որո՞նք գրուեցան ոս-
տիկան.

Պ. Վիրմ ու Մահմէտ, որոնք շատ չարիք
հասուցին. և Աբդլազիզ որ քաղցրութեամբ
խնամեց ազգը:

Հ. Ասոնց ետքն ալ որո՞նք գրուեցան ոս-
տիկան.

Պ. Արուան որ երկու տարիէն Աշոտը
պատրիկ գնելով ինքը գնաց ամիրապետ ե-
զաւ. բայց երբոր Արուան մեռաւ, Աշոտին
ետքը Եզիտ անուն ջոր մարդը ոստիկան
գրուեցաւ որ Հայերը շատ նեղեց (758):

Հ. Եզիտին ետքը ո՞վ իշխեց Հայոց.

Պ. Սահակ Բագրատունի բարեպաշտ
մարդը պատրիկ գրուեցաւ, որուն վերջերը
տարին Սիւրէյմանը ոստիկան խրկուեցաւ.
քիչ մը առնելէն ետքաւ Պէրիր անու-

զորամ մարդը, ու վերջն ալ Հասան՝ որ ամենէն աւելի նեղեց Հայերը։

Հ. Հասանին ատենը Հայերը ինչ դարձու

Հ. Ամիրապետը երբոր լսեց Պուսեմիին սպանելուիը՝ ի՞նչ ըրաւ.

Պ. Բուզա սամիկանը խաբեց Հրամանատարով որ ձեռքէն եկած չարիքը հասցնէ Հայոց. որն որ բոլոր Հայաստան արիւնլուայ ըրաւ:

Հ. Նախարարներէն չեղա՞ւ մարդ մը որ Բուզային ընդդիմանայ.

Պ. Աշոտ Աղծրունին կ'ուզէր ընդդիմանալ. բայց տեսնելով որ ուրիշ նախարարները չեն օգներ, ինքն ալ շատ ընծաներով գնաց Բուզային սիրտը առնելու. բայց փոխանակ պատիւ ընդունելու տեղով դերի գնաց:

Հ. Նախարարներէն ո՞վ եղաւ որ Բուզային առաջնորդեց որպէս զի ինքը պատուոյ հասնի.

Պ. Սմբատ սպարապետը. բայց Բուզա ամէն շարութիւն ընելէն եաքը փոխանակ պատուոյ հասցնելու շղթայի զարկաւ ու Պաղատ գերի տարաւ, իր տեղը Շեխի անունով Պարսիկը սամիկան դնելով:

Հ. Նախարարները և ուրիշ գերիները հոն ի՞նչ եղան.

Պ. Ամիրապետին բռնութիւններէն ոմանք հաւատացին ուրացան ու շատ ալ նահատակուեցան. Սմբատ ալ մեզացը վրայ զգջալով բանտին մէջը մեռաւ ու խոստովանող ըսուեցաւ (856):

Հ. Հայոց այսչափ թշուառութեանց պատճառ որո՞նք եղան.

Պ. Ոչ այնչափ Յոյնքը և Պարսիկներքը կամ Հարաւացիքը, որչափ նոյն միջոցուն մեր ազգին նախանձոտ, ատելութեան, անմիաբանութեան և որ մեծն է անկրթութեան և անձնասիրութեան զօրացած սիտեերը։ Վասնզի ամէն կրթեալ ազգերքը խորշեր են, ինչպէս նաև մեր ազգն ալ իրեն կրթութեան ատենը։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԳԱՍ ԺԷ.

ԱՇՈՏ Ա. Ի ՍՄԲԱՏ Ա.

Հ. Բագրատունեաց իշխանութեան առջի թագաւորը ո՞վ էրաւ.

Պ. Աշոտ՝ Սմբատ խոստովանողին որդին։

Հ. Ի՞նչ կերպով Աշոտ առ իշխանութեան հասաւ։

Պ. Շէխին ոստիկանութիւնը Հայաստանէն վրայ հոգ տանելով և Հագարացւոց հաւատարմութիւն ցուցընելով, Շէխին տէրը վերակացու էրաւ Հայաստանի (859)։

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Աշոտ.

Պ. Ղափարաբնակը Գէորգ կամիտուզիկոսին հետ միաբանած ամիրապետին խնդրելցին որ իրենց թագաւոր դնէ Աշոտը, խոս-

ատելով որ հաւատարիմ կը կենան. ամբարտաւան Աշոտին լաւութիւնները լսած ալ լալով կատարեց խնդիրքնին։

Հ. Աշոտ ինչ պատիւ գտաւ Լեոն կայսրէն, ու ինչպէս մեռաւ.

Պ. Հայաստանի ամէն կողմերը խաղաղցնելէն ետքը Սուլթանը գնաց Լեոն կայսրը յարգութեան համար, ուր որ մեծամեծ պատիւներ գտաւ. վերջը Հայաստան դառնալու առնելը Շիրակ հասնելով ծանր հիւանդացաւ, ու ամէն հոգեւորական պարտաւորութիւնները ընելով մեռաւ 71 տարեկան, 26 տարի իշխելէն ու հինգ տարի թագաւորելէն ետքը։

Հ. Սմբատ երբոր հօրը տեղը անցաւ, ով եղաւ որ թագաւորութեան աչք ձգէ.

Պ. Աբաս իր հօրեղբայրը շատ զրկը ժողված կ'ուզէր ինքը թագաւորել. բայց երկու անգամ յաղթուեցաւ։ Սմբատ Աբասին տեղը ապարատեռ դրաւ իր Շապուհ եղբայրը։

Հ. Սմբատ Աբասը նուաճելէն ետև ուրիշ ինչ թշնամի ունեցաւ.

Պ. Ափշին Պարսից սատիկանը նախանձելով Սմբատայ մեծնալուն վրայ երեսուն հազար զօրքով վրան պատերազմի եկաւ. Սմբատ քաջութեամբ Ափշինին սիրտը խլեցաւ ու հաշտուեցաւ հետը։

Հ. Ամիշին ոչչափ առնէ հատատուն Ծաց իր դաշինքին վրայ.

Պ. Խիստ քիչ. վասն զի զգլխով ըրած հաշտութիւնը վրայ, խարխուլութիւնը Սրմրատայ վրայ վազեց ու առջի բերան շատ շարիք հատուց. Սմբատ շատ զոյք ժողվեց ու փոխուց Ամիշին։

Հ. Սմբատ Ամիշինին յաղթելէն ետքը ուրիշ ինչ թշնամի ունեցաւ.

Պ. Ահմատ Մելիքագեատց ասիկանը, որուն հետ միացաւնան Գագիկ Արծրունին Սմբատայ ազգականներէն մէկը՝ ու Ահմատին առաջնորդ եղաւ. Սմբատ թէպէտ և յանկարծակի եկաւ, բայց քաջութիւնով պատերազմելով յաղթեց Ահմատին ու փախուց իր տեղը։

Հ. Սմբատ Ահմատին ալ յաղթելէն ետքը հանգիստ մնաց.

Պ. Չէ. վասն զի Ամիշին նորէն պատերազմի եկաւ վրան, ու Սմբատ ալ անօգնականութեամբ պատանեգ տուաւ իր որդին. բայց Ամիշին երբոր ուրիշ շարիք ալ կ'ուզէր հասցնել, ինքը տոկալի մահուամբ մեռաւ, ու իրեն տեղը յաջորդեց Յուսուֆ իր եղբայրը։

Հ. Սմբատ ասիկանները բռնութիւնէն ազատելու համար ինչ ճար գտաւ.

Պ. Ամիրապետէն խնդրեց որ փոխանակ տուքերը ասիկանները ձեռքովը ապրա, ուզածի ամիրապետին խաբէ ինքը։

Հ. Ինչու համար Աղթամարեցիներն վրաց թագաւորը ու նախարարները Սմբատայ գլխի եկան.

Պ. Եգեղեցւոյ Կաստանդին թագաւորը ապստամբեր էր Սմբատէն. Սմբատ Աղթամարեցիին հետ մէկտեղ վրան պատերազմի ելաւ, ու զինքը Աղթամարեցիին ձեռքովը բռնել տալով Ներսի ամրոցը գրաւ. շատ ոսկի վրան գթալով բռնեցին համեցց ու արձակեց իր տերութիւնը։ Այս բռնեն նախարարները իրենց նախանձը սեղելով ապստամբեցան։

Հ. Նախարարներուն ապստամբութիւնը ինչ վերջ ունեցաւ.

Պ. Ըրած գործերնին պարապը եղլով շարաշար յաղթուեցան. Սմբատ նախարարներուն շատին աչքը կուրցուց, ու Աղթամարեցիին վրայ գթալով ազատեց։

Հ. Սմբատ նախարարներուն յաղթելէն ետքը, ինչ նոր խռովութիւն ընկաւ Հայաստանի մէջ.

Պ. Դաւիթ Արծրունին Սմբատայ քեռորդին ապստամբելով եկաւ, գնաց Յուսուֆին քով. Յուսուֆ ալ որդիս զի Հայաստանի մէջ խռովութիւն ձգէ՝ զինքը թագաւոր ըրաւ (908)։

Հ. Դաւիթայ թագաւորութենէն ինչ շար հետեւանքներ եղան.

Պ. Դաւիթ և Յուսուֆ միացած վազելին

Սմբատայ վրայ, որոնց կողմը անցանելանելա-
խարարներէն շատը. Սմբատ ալ տեսնելով
որ միտակ գէմ չկրնար գնել, Գուգարացւոց
երկիրը փախաւ։

Հ. Սմբատ Գուգարացւոց քովէն ուր
գնաց քաշուեցաւ.

Պ. Երբոր տեսաւ որ իր Աշոտ ու Սու-
շէզ տղաքն ալ յաղթուեցան Սեւրգիսե-
բուն մատնութեամբը, ինքն ալ յուսահա-
տած Կապոյտ ամուր բերդը գնաց քաշուե-
ցաւ։

Հ. Յուսուֆ ինչպէս առաւ Կապոյտ
բերդը.

Պ. Սմբատ տեսնելով որ իր պատնառաւը
սատիկ չարդ կ'ըլլայ, անձնատուր եղաւ
Յուսուֆին՝ երդումն տալով որ իր անձին
վնաս չհասցնէ։

Հ. Յուսուֆ Սմբատը ինչ ըրաւ.

Պ. Դախ գրուանց պատիւ ցցուց ու նան
ազատ ալ թողուց. բայց վերջը նորէն խար-
դախութեամբ կանչելով սկսաւ տանջել ու
շարչարել որ կամ հաւատքը ուրանայ և կամ
մեռնի. սակայն տանջանքներ տալէն վեր-
ջը մորթել ու գլուխն ալ կտրել տուաւ
տանջելոց տարի թշուառութեամբ թա-
գաւորելէն ետքը (913)։

ԴԱՍ ԺԷ.

ԱՇՈՏ Բ. ԵՐԿՐԸ Ի ԱՔՈՍ։

Հ. Սմբատին մեռնելէն ետքը Հայոց վիճակը ինչպէս եղաւ.

Պ. Երկնչակ ամուր բերդը առնելով Յուսուֆ, բնակիչներուն մեծ մասը ջարդեց ու շատն ալ գերի տարաւ. ու ասով բոլոր Հայաստանի սիրելով պահապաններ թողուց ու ինքը Պարսկաստան գնաց։

Հ. Երբոր լսեց Աշոտ Սմբատայ ապան իր հօրը մեռնիլը ինչ ըրաւ.

Պ. Վէցհարիւր հոգւոյ չափ մարդիկ ժողվելով, վազեց Յուսուֆին թողուցած պահապաններուն վրայ ու սատակ ջարդ տալով զամէնքն ալ փախուց։

Հ. Հայերը Աշոտ Երկամիտն քաջութիւնները տեսնելով ինչ ըրին.

Պ. Սիսականեցան ու գինքը թագաւոր դրին. բայց քիչ մը առէնէն նախարարներէն ոմանք վրան նախանձելով, ապստամբեցան իրմէ ու նորէն խռովեցին աշխարհքը։ Այս բաներս տեսնելով Յուսուֆ՝ ինքն ալ շատ չարիք հատուց Հայոց։

Հ. Հայոց ան թշուառութիւններուն մէջ, չի՞նա մէկը որ ողորմի ու խաղաղեցնել ջանայ.

Պ. Կոստանդին Պերփերոմժէն Յունաց կայսրը, որ լսելով Հայոց խեղճութիւնները Աշոտը Սոստոյ կանչէց, ու շատ պատուելէն ետքը՝ Յունաց զգեստով իր թագաւորութեանը դարձուց զինքը (921։

Հ. Աշոտ սատանկ փառքով Հայաստան դառնալէն վերջը կրցաւ խաղաղ թագաւորել.

Պ. Չէ. վասն զի Յուսուֆ Աշոտ երկաթին հօրեղբօրը տղան Աշոտը թագաւորեցուց որ Բռնաւոր ըսուեցաւ. ասով նորէն խռովութիւն ընկաւ Հայոց մէջ, ու սատանկ Լարդեր եղան երկու կողմէն ալ, ինչուան որ Յովհաննէս կաթուղիկոս հաշտեցուց զիրենք։

Հ. Աշոտ երկաթ Աշոտ բռնաւորէն զատ ուրիշ ինչ թշնամիներ ունեցաւ.

Պ. Ընկերութիւն և անկարգութիւն հոգիմտած ըլլալով, ամէնքը կ'ուզէին ինքնիշխան թագաւոր ըլլալ. ինչուան նաև Աբաս՝ Աշոտի եղբայրն ալ ապստամբեցաւ, ու պատերազմներ ըրաւ եղբօրը հետ. Աշոտ ալ յուսահատած գնաց Սևան կղզին քաշուեցաւ հարիւր հոգւով։

Հ. Աշոտ Սևան կղզին քաշուելէն առաջ ինչ քաջութիւն ըրաւ Ցլիկ Ամիրային դէմ.

Պ. Երբոր օր մը Աշոտ զուարճութիւն համար Ռուսաց կողմը գնացեր էր, լսելով անոնց իշխանին Ցլիկ Ամիրային ապստամ-

բուֆիւնը, Եղեբացւոց թագաւորէն քիչ մը զօրք օգնութիւն առաւ ու գնաց ամուր բերդի մը մէջ պահուըտեցաւ. Ամրամ ելկաւ պաշարեց զինքը. Աշոտին քովի մարդիկը տեսնելով որ խաղցաւած չկայ, մէջերնին որոշեցին որ Աշոտը բռնեն Ամրամին տանեն ու իրենք ազատին. Աշոտ իմանալով անոնց չարութիւնը՝ գիշերուանց ձի հեծաւ ու թշնամեաց մէջէն քաջութիւնով անցնելով փախաւ Սեան կղզին գնաց. ասոր նման շատ քաջութիւններ ըրաւ Աշոտ։

Հ. Երբոր Աշոտ Սեան կղզին քաշուեր էր, Հայաստան ինչ վիճակի մէջ էր.

Պ. Յուսուսի Ղբար անուանով վերակացուն մը խաբեց որ շատ չարիք հասուց Հայոց, իրենց անմխիթարութիւնը ցաւալի և արժանաւոր պատիժ։

Հ. Աշոտ երկոտ ինչպէս յաղթեց Բրչիկանին.

Պ. Ղբարին տեղը Բրչիկ իշխեցաւ. ասիկայ իմանալով որ Աշոտ Սեան կղզին քաշուեր է՝ ուզեց բռնել. բայց Աշոտ իրեն քիչուորդ մարդիկը այլ և այլ նաւակներու մէջ բաժնելով նենտանգութիւնը շատ մարդ ապտնեց, որով թշնամիները սկսան փախչիլ. ինքն ալ նաւերին իջնալով հարածեց, ու գարձաւ իր տեղը։

Հ. Աշոտ ինչուան երբ Սեան կղզին քաշուած մնաց.

Պ. Տեսնելով որ կամաց կամաց խաղաղացաւ Հայաստան, ինքն ևս կաւ իր թագաւորութիւնը ու հաշտութիւն ըրաւ Աբաս եղբօրը հետ. և քսանչորս տարի ընդհատ ուանհանգիստ կերպով թագաւորելէն ետքը մեռաւ։ Ասիկայ Շահինշահ (թագաւորներու թագաւոր) ալ ըսուեցաւ։

Հ. Աբաս եղբօրը տեղը յաջորդելով ինչ կերպով կառավարեց ազգը.

Պ. Ամենայն գրաւ. իր զգօնութիւնը թշնամիներուն յաղթեց ու խաղաղութիւն ըրաւ, որով Հայաստան սկսաւ ծաղկիլ։

Հ. Աբաս ինչ երևելի պատերազմ ըրած ունի.

Պ. Բնչ Վրաց և Ադիաբազայ թագաւորը պատերազմի ելաւ Աբասին դէմ, ու ծաղրելով պատգամ խաւրեց որ Կարսին մայրը եկեղեցին ինքը ոչխարի գայ օրհնէ Վրաց ծիսով. Աբաս գէնն ելաւ յաղթեց ու բռնեց և Կարս բերելով ցրցուց ան եկեղեցին որ կ'ուզէր օրհնել, ու վերջը աչքերը կուրցուց։

Հ. Աբաս որչափ տարի թագաւորեց.

Պ. Քսանչորս տարի խելքով ու խաղաղութեամբ (953)։

ԳԱՍ ԺԸ.

Անծրուանեաց իսմ վասդուրեան սպասարհն ի գաստրութիւնը։ Աստ Ոգորմած սա Սմբատ Բ։

Հ. Ո՞վ եղաւ Անծրուանեաց առաջին թագաւորը.

Պ. Գագիկ, Սմբատ առաջինին քեռորդին, ինչպէս որ վերը ըսինք։

Հ. Գագիկին որո՞նք յաջորդեցին.

Պ. Իր որդին Աշոտ Դերենիկ 16 տարի. Եղբը Դերենիկին զգոյշ եղբայրը Հանազատ Աբուսահլ, որուն յաջորդեցին իր իրենք տղաքը Աշոտ, Գուրգէն, Սենեքերիմ. սա Սենեքերիմը Սկիւթացւոց բռնութիւններէն ազատելու համար՝ ինքը Սեբաստիոյ գաւառը առաւ Յունացէ ու Վասպուրականը անոնց տուաւ 1021ին։ Հոն իրեն յաջորդեց իր որդին Դաւիթ, ան որ ալ յաջորդեցին Աշոտի և Աբուսահլ որոնք երբոր մեռան 1080ին, բոլորովին վերցուեցաւ ան թագաւորութիւնն ալ։

Հ. Աշոտ Դերենիկին թագաւորութիւնն առնը ի՞նչ յիշատակի արժանի գործ պատահեցաւ.

Պ. Ապիսարիսպ Հաւնունիին Դերենիկը մատնելը ու վերջին ըլլալ քաջութիւնը։

Հ. Ապլնարիոս ինչու՞ համար Դերենիկը մատնեց թշնամեաց ձեռքը.

Պ. Վասն զի Դերենիկ ուրիշներուն գրգռումեամբը Ապլնարիոսը սպարապետութիւն պաշտօնէն ձգեր էր. Ապլնարիոս ալ առ բանիս վրէժը առնելու համար Հեր ու Զարեանդ գաւառներուն իշխանները պատերազմի յորդորելով անոնց ձեռքը մատնեց։

Հ. Ապլնարիոս երբ ըրած են վրայ ի՞նչպէս ազատ.

Պ. Վանահայրները ու եպիսկոպոսները լսելով առ բանս նզովեցին Ապլնարիոսը. ինքն ալ զղջաց իր յանցանացը վրայ. օր մը երբոր իշխանները դաշտի մը մէջ Դերենիկը կը շարչարէին հեռը խաղալով, Ապլնարիոս իմացաւ ու հոնտեղուանքը գարան մտաւ և իշխանները որը սպանեց որը փախուց Հեր քաղաքը, որոնք մէկէն քաղքին դռները գոցեցին. Ապլնարիոս այնպէս կատաղութեամբ զարկաւ որ սուրը երկրէն դրան մէջը խրեցաւ մնաց. և սատակով ազատեց Դերենիկը (940)։

Հ. Աբասին մեռնելէն ետև Հայոց վիճակը ի՞նչպէս եղաւ.

Պ. Ղանարարները չմիաբանելնուն համար տարբ տարի առանց թագաւորի մնաց Հայաստան. Թէպէտ և Աշոտ Աբասին որդին շատ զօրք ժողված խելքով ազգը կը կառավարէր ու թշնամիներուն սիրաը վախ ձգեց իրեն քաջութիւններուվը (952)։

Հ. Աշոտ Գ. ի՞նչպէս թագաւորեց.

Պ. Տեսնելով նախարարներէն Աշոտի կատարելութիւնները՝ թագաւոր ուզեցին զինքը. ասիկայ իր ողորմածութեանը համար Աշոտ Ողորմած բաւեցաւ:

Հ. Աշոտի առեր ուրիշ ի՞նչ թագաւոր ալ կար Հայաստան.

Պ. Մուշեղ Աշոտի եղբայրը գլուխ քաշելով Կարսի մէջ թագաւորեց. Աշոտ իր ուղութիւն չըլլալու համար ձայն չհանեց. ուստի թագաւորական ոչ ոքն ալ քիչ մը առնելն գնաց ու վերջը Յունաց անցաւ:

Հ. Աշոտի յիշատակի արժանի գործողութիւնները որո՞նք են.

Պ. Երեն խաղաղատէր խելացիութիւնն ու բարեպաշտութիւնը, որուն նմանը չելաւ Բագրատունեաց մէջ: Ասիկայ Անին մայրաքաղաք ընելով զարդարեց:

Հ. Աշոտ ի՞նչ արդիւնք բրաւ որ ամիրապետէն պատիւներ ընդունեցաւ.

Պ. Համուն Տաճիկներուն սպարապետը սպասամբելով ամիրապետէն, Հայաստանի վրայ վազեց. Աշոտ դէմը ելլելով զինքը սպաննեց:

Հ. Աշոտի ո՞վ յաջորդեց.

Պ. Քառասուն տարի սպասելի կերպով կառավարելէն ետքը, արքութիւնը թողուցեր Երեն յաջորդեց Սմբատ իր անդրանիկը:

Հ. Սմբատ Բ., ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Իր հօրը պէս խաղաղասէր ու շինութիւնասէր եղաւ, ու Տրդատ Ճարտարապետին ձեռքովը շինել տուաւ Անիի մայրը եկեղեցին և ուրիշ շատ շէնքեր:

Հ. Ինչպէս եղաւ իր բարեպաշտութիւնը մէջ մեռաւ.

Պ. Չէ. սկսաւ վերջերը եկեղեցական օրինաց գէմ բաներ ընել ու առելի ըլլալ. տասուներկու տարի թագաւորելէն ետքը մեռաւ (988):

ԳԱՍ ԺԹ.

ԳԱԳԻԿ Ա. Ի ՅՈՎՀԱՆԷՍ ՍՄԲԱՏ:

Հ. Գագիկ առաջին ինչ կողմանէ աղուամանի եղաւ.

Պ. Թէ բարեպաշտութեամբ և թէ քաջաբաշխութեամբ Բագրատունեաց երեքերորդ գովելի թագաւորներէն մէկը եղաւ. երեսուն տարի թագաւորելէն ետքը մեռաւ. ամենայ լեր ընցուց Անիին շէնքերը:

Հ. Ո՞վ յաջորդեց Գագիկ առաջինին.

Պ. Յովհաննէս Սմբատ որ թէպէտ և խելացի էր, բայց գոռծունեայ և աշխոյժ չըլլալուն շատ շարիքներ հասուցաւ Հայաստանի. նաև Անշատ եղբայրն ալ ապստամ-

բնցաւ իրմէ որ քաջ ու ապիգլուխ երիտասարդ մին էր։

Հ. Յովհաննէս Աշոտին հետ ինչպէս հաշտուեցաւ.

Պ. Աշոտ Սենեքերիմ Վասպուրականի թագաւորին օգնութիւն առնելով եկաւ Անին պաշարեց. Պետրոս կաթուղիկոս ու Գորգի Վրաց թագաւորը մէջ մտնելով հաշտեցուցին իրարու հետ։

Հ. Աշոտ իր խոստմանը մէջ հաստատուն մնաց.

Պ. Ոչ։ Զոքայով ըրած խոստմանը վրայ, հիւանդ մնացաւ. երբոր Սմբատ զինքը տեսնելու եկաւ, հոն որոգայթի մէջ բռնուեցաւ ու սկսաւ ազաչել Աշոտին որ իր կեանքը խնայէ. Աղիրատ իշխանը բռնեց ըզ Սմբատն ու մնացուց թէ մեռցնելու կը տանի. բայց գնաց Անի՝ ու նորէն Սմբատը թագաւորեցուց և ինքը փախաւ գնաց։

Հ. Ինչ պատճառաւ Յովհաննէս Սմբատ Անին Յունաց Վասիլ կայսեր խոստացաւ տալ.

Պ. Վասն զի իր թագաւորութեանը չորրորդ տարին Սկիւթացիք Հայաստանի վրայ վազելով շատ չարաներ հասուցին. ինքն ալ չկրնալով դէմ դնել՝ Վասիլ կայսեր թղթով խոստացաւ որ իր մեռնելէն ետքը Անին Յունաց անցնի, միայն թէ Վասիլ օգնէ իրեն Սկիւթացւոց դէմ (1024)։

Հ. Սմբատին թղթով ըրած աս խոստմունքը ինչ հետևանքներ ունեցաւ.

Պ. Կոստանդին՝ Վասիլ կայսրը եղբայրը՝ մեռնելու առնը, Կիրակոս անուանով հայ քահանայ մը կանչեց ու էտ տուաւ Ընդին համար եղած գաղտնիքն նամակը: Ան անպզգամ քահանան ալ պահեց թուղթը քովը. ու երբոր 1034ին Միքայէլ կայսր նստաւ, տարաւ նորէն անոր տուաւ թուղթը, ու ինքը անոր փոխարէն շատ տակ առաւ. աս բանս պատճառ եղաւ որ Բագրատունեաց թագաւորութիւնը կործանեցաւ:

Հ. Սմբատ ոչչափ առնն թագաւորեց.

Պ. Բաւն տարի ու անորդի մեռաւ: Ասոր թագաւորութեան վերջին տարիները Տուղրիլ Սելիմացւոց իշխանը խիստ շատ ինտ ու աւերմունքներ ըրաւ Հայաստանի մէջ, որուն գէմ դրաւ քաջութեամբ քիչ մը առնն Վասակ Պահլաւունի, թէպէտ և վերջը ինքն ալ ապստամբեցաւ առանձնացած ազգեր ընելու առնը:

Հ. Վասակ ապստամբելն գաւառին մէջ աս միջոցներս ինչ անողորմութիւն գործք եղաւ.

Պ. Խարիկ անուանով Պարսիկը որ Բերկրիին քաղաքապետն էր, Հայերին հալածելով ոչ պահեց. ու քանի մը ամիսներու օգնութեանը յարձակելով Հայոց, մարդասպան խորութեամբ փոս մը փորել տուաւ, ու ձեռքը ինկած մարդիկը մորթել տալով արիւնով լեցուց փոսը, ու ինքը

արիւնարոյծ գազանի պէս մէջը մնելով լուացուեցաւ։

ԳԼԽ Ի.

Գ-ՈՒԹԻՒՆ Գ., ԵՒ ԲՈՒԹՐՈՒԱՆԷՑ ԲՈՒՈՒՐՈՒԹԵԱՆ ԽՐԱԽՈՒՆԷԸ։

Հ. Յովհաննէս Սմբատին մեռնելէն ետքը ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան.

Պ. Երկու տարի անոնք մնալով Վէստ Սարգիս Սիւնեաց իշխանը զօրացաւ ամենուն վրայ և կ'ուզէր թագաւորել։

Հ. Ի՞նչ հնարք բանեցուց Վէստ Սարգիս որպէս զի իր խառնվածքը ու ամբարտաւանութիւնը առաջ տանի.

Պ. Երբոր լսեց Միքայէլ կայսրը որ Սմբատ մեռեր է, իրեք անգամ զօրք խաբեց Հայոց վրայ որ երթան Ընին առնեն. Վէստ Սարգիս ամենայն կերպով անոնց օգնեց, որպէս զի Միքայէլ կայսեր առջեր արդիւնք մը երած ըլլայ։

Հ. Ներսարարները Հայաստանի աւերմունքը տեսնելով ի՞նչ ըրին.

Պ. Վահրամ Պահլաւունիին յորդորանքովը միարանեցան ու Գագիկ Բը, թագաւոր օծեցին. որն որ Յովհաննէս Սմբատին Անւոն էրդորը ազան էր՝ խնամուն և շատ շնաշխարհիկ կատարելութիւններով զարդարուած (1042)։

Հ. Գագիկ Բ.ին, առջի գործողութիւնը ո՞րն է եղաւ.

Պ. Վէտա Սարգիսը բռնեց ու կապած Ընդի բերաւ. բայց վերջը ուրիշներու միջնորդելովը ազատ թողուց զինքը:

Հ. Գագիկ Բ, ուրիշ ի՞նչ քաջութեան գործք ըրաւ.

Պ. Սկիւթացիք Հայաստանի վրայ վազեր էին. Գագիկ ասոնցմէ հազար զօրքով ա-նոնց դէմը եկաւ ու վարպետութիւն և քաջութիւն պատերազմելով զամէնքն ալ փախուց:

Հ. Ուրիշ որո՞ւ հետ պատերազմ ըրաւ.

Պ. Մոնոմախոս՝ Միքայէլ կայսրը յաջորդը նորէն սկսաւ Ընդին ուզել. երբոր Գագիկ յանձն չառաւ, Մոնոմախոս երկու անգամ վրան պատերազմի եկաւ, բայց յաղթուեցաւ. աս ամէն շարութեանց պատճառն էր Վէտա Սարգիս:

Հ. Վէտա Սարգիս երբոր տեսաւ որ Մոնոմախոս յաղթուելով իր խորհուրդը փուռ եկաւ, ի՞նչ շարիք մտածեց.

Պ. Իրեն պէս քանի մը ապգատեաց փոռոմոլ ու անխելք նախարարներու հետ միացած, խորհուրդ տուաւ Մոնոմախոս կայսրը որ բարեկամութիւն Սատանոյ կանչէ Գագիկը, ու վերջը իրենք մատնեն Ընդին:

Հ. Գագիկ յանձն առա՞ւ կայսրը հրաւէրքը.

Պ. Խնամեալով կայսերս ու իր թշնամեաց շար միտքը ամենեին յանձն չառաւ. բայց նոր խարդախներդ առաւ երդում ընելով թէ իրենք Անին կը պաշտպանեն՝ յորդորելցին զինքը որ կայսերս երթայ. ինքն ալ երաւ գնաց, առելի ճարը հատնելով քան թէ հաճոյանալով։

Հ. Կայսրը ի՞նչ կերպով ընդունեցաւ զինքը.

Պ. Նախ մեծ պատիւ ու սէր ցցուց, բայց վերջը սկսաւ Անին ուզել. Գագիկ ամենեին կերպով մ՚ալ յանձն չառաւ. ան առեն Վ. Եռաս Սարգիս ու իր կուսակիցները Անիին բանալիները կայսերս խրկեցին։

Հ. Գագիկ երբոր սեռաւ Անիին բանալիները ի՞նչ ըրաւ.

Պ. Կրքէն ու յուսահատութենէն թագաւորութիւնն ալ ձգեց իրեք տարի եշխելէն ետքը. կայսրը աս բանիս վրայ ուրախացած՝ Գագիկին քանի մը քաղաքներ տուաւ ու ինքը Հայաստանի սիրեց (1045)։

Հ. Բագրատունեաց թագաւորութեան կործանելէն ետքը, ի՞նչ խեղճութիւններու հասաւ Հայաստան.

Պ. Ամէն տեսակ թշնամի Հայաստանի վրայ վազելով մեքէ ջանցած ջարդերը հաստցին Հայոց, որոնց մէջ նշանաւոր էղան Տուղրիլ, Ալփարսլան ու իր տղան Մելիք-շահ։

Հ. Այս միջոցներուն մէջ ինչ քաջութիւն գործք կը պատմուի Թամիրայ ապարատպետին վրայ.

Պ. Անիկայ Տուղրիլին զօրացը դէմ ելլելով, շատ շարիք հասցնելէն վերջը, անոր իշխանները մէկուն ապան վերադարձաւ։ Երբոր Թամիրը բռնուելով Տուղրիլին դիմացը եկաւ, ըսաւ Տուղրիլ. «Թէ որ ապրի ապան զքեզ ալ կը խաղցնեմ». պատասխան տուաւ Թամիրայ. «Թէ որ զարնուածքը իմս է չապրիր». մեռաւ ապան; անոր հանար զինքն ալ սպաննեցին։

Հ. Ալփարսլան Տուղրիլին յաջորդելով ինչ շարիք հասուց Հայոց.

Պ. Երկար առնն Անին պաշարելէն ետքը առաւ ու տակալի Ջարդեր ըրաւ Անուոյ մէջ։

Հ. Գագիկ Աբասեան ինչ հնարքով ազատեցաւ Ալփարսլանին հարուածէն.

Պ. Սուգի լամիր հագած Ալփարսլանին դիմացը եկաւ, ըսելով որ «Տուղրիլին մահուանը համար սուգի մտեր եմ». Ալփարսլան վրան խղճալով սիրով պատգամեցաւ հեռը ու շարիք մը չհասուց։

Հ. Գագիկ Բ ինչպէս հանար թշնամացաւ Յունաց հետ.

Պ. Կոստանդիկոս Յոյները շարաշար կը նախատէին զՀայերը. ու Կեսարիոյ մեծատարածին ալ իր շանը անունը Արմէն գրեր էր, ինչպէս նաև ուրիշ շատերը։

Հ. Գագիկ աւ նախարարաց վրէժը ինչ պէս հանեց.

Պ. Երբոր մեծրապօլսին քովը կերակուրի գացեր էր, ինքրեց Գագիկ որ շունը կանչէ. մեծրապօլիան ալ Արմէն ըսելով կանչեց. ան առեն Գագկայ ծառաները բռնեցին շունն ու մեծրապօլիսը ու պարկի մը մէջ դնելով սկսան շունը շարաչար ծեծել. ան ալ կատաղութեամբ այնչափ խածաւ զմեծրապօլիսը որ երկուքն ալ պարկին մէջ մեռան։

Հ. Յոյնք ի՞նչ վրէժը ինչպէս հանեցին Գագիկէն.

Պ. Երբոր անգամ մը Կիզիստրա քերդը գացած՝ պարտեզին մէջ կը հանգչէր, բերդին տէրերը, որոնք յոյն էին, դարան մտնելով բռնեցին զինքը ու սոսկալի տանջանքներով սպաննեցին. վերջը մարմինն ալ բերդին վրայ կախեցին։ Թշուառութեամբ թագաւորեց ու սպրեցաւ, խեղճութեամբ մեռաւ (1079)։

Հ. Յոյները ո՞ւրչափ առեն տիրեցին Հայաստանի.

Պ. Քիչ միջոց. վասն զի Մելիք շահ Յոյները վռնտեց ու ինքը տիրեց Հայաստանի։

Հ. Բագրատունեաց տէրութիւնը կոր ծանեքէն եւոև, մէկալ ապստամբ կամ բրնաւոր թագաւորները ինչ եղան.

Գ. Ամ միջոցներուն վերցուելցան անոնք ալ, որ էին Արծրունեաց ու Կարսի թագաւորութիւնը որն որ իրեք թագաւոր ունեցաւ Մուշեղ, Աբաս ու Գագիկ, որ իր տէրութիւնը Յունաց տուաւ և ինքը Դամինդաւ քերդը քաշուեցաւ (1066)։



ՄԱՍ ՀԱՐՐՈՐԴ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻԿԵԱՆՑ

ԴԱՍ ԻԱ.

ՌՈՒԲԷՆ Ա, ԿՈՍՓԱՆԴԷՆ Ա, ԹՈՐՈՍ Ա, ԼԷՈՆ Ա, ԹՈՐՈՍ Բ, ՄԼԷԿ Ե ՌՈՒԲԷՆ Բ։

Հ. ՌՈՒԲԻԿԵԱՆՑ թագաւորութիւնը ինչպէս սկսաւ.

Պ. Բագրատունեաց տէրութեան կործանելէն երեսունչորս տարի վերջը, Ռուբէն անուանով իշխան մը Գապկայ ապգականութենէն, Կիլիկիոյ կողմերը երթալով հոն տեղի Հայոց սիրտը վաստակեցաւ, ուխտ մը կարիճ գլուխը ժողվելով քանի մը ապգի քաղաքներու տիրեց ու սկսաւ կառավարել զանոնք (1080)։

Հ. Ռուբէն որչափ առեն իշխեց.

Պ. Գող Վասիլ ըսուած իշխանին օգնութեամբը ուրիշ քաջութիւններ ալ ընելէն վերջը Յունաց գէմ, տասնուվեց տարի իշխելէն ետքը մեռաւ։

Հ. Ո՞վ յաջորդեց իրեն.

Պ. Իր որդին Կոստանդին Ա., որ խելքով հինգ տարի կառավարեց տերութիւնը, ու Լատինացւոց՝ որ սուրբ երկիրը ազատելու կ'երթային, օգնեց. որոնցմէ վերջը շատ ընծաներ ու պատիւներ առաւ։

Հ. Թորոս Ա., իր հօրը տեղը յաջորդելով ի՞նչ քաջութիւններ ըրաւ.

Պ. Յոյներէն պատերազմով Անտիոքայ քաղաքը առաւ. Սկիւթացիները ու Պարսիկները որ Հայաստանի վրայ կը վազէին ցրուեց ու փախուց։ Կիլիկիոյ բերդն ալ վարպետութեամբ առնելով Դապիկը մեռցնողները ապաներեց։ Թորոս քսանուերկու տարի իշխեց ու մեռաւ։

Հ. Թորոս Ա. ի՞նչ ունի՞ յաջորդեց.

Պ. Իր եղբայրը Լեւոն Ա., որ Մամեստիոյ և ուրիշ շատ քաղաքներ առնելով ամենուն սիրտը վախ ձգեց՝ ինչուան նաև Յունաց ալ։

Հ. Լեւոն Ա., ի՞նչպէս բռնուեցաւ Պեմենի Անտիոքի կոմսին.

Պ. Պեմենի Լեւոնին վրայ նախանձելով զինքը սեղանի կանչեց ու բռնելով բանտը դրաւ. Լեւոն քանի մը քաղաքներ ու իր որդին պատանդ տալով ազատեցաւ։

Հ. Լեւոն աս նախատանաց վրէժը ի՞նչպէս հանեց.

Պ. Մէկէն զրկեց Ժողովեց ու տուած քա-

զանգեալքը էս առնելէն զատ. այնչափ նեղը խոթեց Պէոսիքը, որ ինքը Լեոնին պատանդներ տալով հաղիւ խաղաղեցաւ ձեռքէն։

Հ. Լեոն ինչու

Պ. Ընդրոնիկոս զօրավարը խուսրեց շատ զօրքով որ երթայ Թորոսը շրջայի զարկած Սամսոլ բերէ։

Հ. Ընդրոնիկոս կրցաւ կայսեր պատուէրը կատարել.

Պ. Չէ. վասն զի երբոր լսեց Թորոս այս բանս՝ սաստիկ բարկանալով, անանկ քաջութեամբ պատերազմեցաւ, որ մեծ ջարդ տալէն ետքը Յունաց, շատ իշխաններ ալ գերի բռնեց անոնցմէ։

Հ. Թորոս ի՞նչ ըրաւ այս իշխաններուն.

Պ. Կայսրը խիստ շատ սակով գնեց. Թորոս բոլոր առած սակը զօրացը բաժնեց գեղապանեներուն առջին. երբոր անոնք զարմացան. ըսաւ Թորոս. «Կամաւ ըրի որպէս զի ծորէն բռնեն ձեր իշխանները»։

Հ. Ինչո՞ւ համար ծորէն պատերազմ բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ.

Պ. Սուրփանէ Թորոսին եղբայրը ապստամբելով իրմէ՝ շատ չարիք հասուց Յունաց. անոնք ալ կերպով մը զինքը բռնելով եռացեալ ջուրի մէջ ապանեցին։ Այսով պատերազմ բացուեցաւ Յունաց ու Թորոսին մէջ։

Հ. Թորոս այս պատերազմներուն մէջն ալ յաղթեց Յունաց.

Պ. Աւելի բերդաններէն միշտ յաղթեց. բայց երբոր տեսաւ որ Կիւ Վառուել մեծ

պատրաստութիւն վրան կուգայ, հաշտութիւն բրաւ կայսեր հետ, ու քանի մը տարին մեռաւ քանիշերորդ տարի իշխելէն ետքը։

Հ. Ինչո՞ւ համար Թորոսին մեռնելէն ետքը խռովութիւն ինկաւ Հայոց մէջ.

Պ. Վասն զի Թորոսին տղան պզտիկ ըլլալով իրեն խնամակալ գրուեցաւ Թոմնաս Պայլ որ ազգաւ Լատին էր։ Մլեհ Թորոսին եղբայրը որ արդէն ապստամբած էր՝ Բէրիայի ամիրայէն օգնութիւն առնելով, եկաւ ու ինքը սկսաւ իշխել, շատ խռովութիւններ ըլլալէն ետքը։

Հ. Մլեհ որչափ առեն իշխեց.

Պ. Հինգ տարի իշխելէն ետքը սպաննեցին զինքը՝ իրեն անկարգութիւններուն համար, ու Ռուբէն Բ. իշխաւ գրին (1174)։

Հ. Ռուբէն Բ. ի՞նչպէս կառավարեց իր ազգին տէրութիւնը.

Պ. Շատ մեծ խնամք ունեցաւ իր երկրին բարեկարգութիւնը վրայ, բայց ախտաւ որ Հեթում Լամբրոնի իշխանը հետը թշնամացաւ, պատճառաւ որ Ռուբէն Տարսոնը Յունաց ձեռքէն առեր էր։

Հ. Ի՞նչ հետևանք ունեցաւ աս երկու իշխանաց թշնամութիւնը.

Պ. Պատերազմի ելան իրարու դէմ, ու Հեթում յաղթութեամբ օգնութիւն կանչեց Պեմունդ անուանով Անտիոքայ Լատին կոմ-

ոը. Պեմոնդ ալ բարեկամութիւն ձեւացնելով Ռոբէնին հետ, բանից գինքը ու շղթայի զարկաւ։

Հ. Ի՞նչ կերպով ազատեցաւ Ռոբէն բանտէն.

Պ. Լեոն Ռոբէնին եղբայրը լսելով աս բանս՝ շատ զօրքով սատակ նեղը խմեցաւ Հեթու�ու Պեմոնդը, ու իր եղբայրը ազատելով բերաւ ամրոցը նստեցուց։

Հ. Ռոբէն Բ. ո՞րչափ տարի խշխեցաւ։

Պ. Տասներեակ տարի խշխեցաւ։ Եղբը վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ, ու Լեոնը իր տեղը խշխեցուց։

ԳԱՍ ԻԲ.

ԼԵՈՆ Բ. ՓԻԼԻՊՊՈՍ — ՀԵՌՈՒՄ Ա. ԼԵՈՆ Գ.

Հ. Լեոն Բ. ի՞նչ բանեցրով երեսելի եղաւ։

Պ. Իրեն խնամատարութեամբը, քաջութեամբը ու ան ամէն կատարելութիւններով որ թագաւորի մը հարկաւոր են. որով նոանց իր սերութիւնը ամենայն մասամբ ծաղկեցուց ու ընդարձակեց։

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Լեոն Բ.

Պ. Եվրոսաղեմի վրայ գացող խաչակիր զօրաց օգնելով անունը Եվրոպա հռչակուեցաւ, ու Փրանգերիկոս Դերմանացւոյ

կայարն ալ թագ խոստացաւ. բայց ինքը մեռնելով իրեն յաջորդը Հենրիկոս՝ և Կելեստինոս Պապը կատարեցին Փրեդերիկոսի խոստմունքը թագ ու գրոշ խաւրելով. Լևոն ալ Սսոյ մէջ թագաւոր օծուեցաւ Գրիգոր կաթուղիկոսէն (1198)։

Հ. Լևոն թագաւոր օծուելէն ետքը ինչ պատերազմներ ըրաւ.

Պ. Քայքաւուզ Իկոնիոյ ամիրային յաղթեց, թէպէտ և սկզբան յաղթուեցաւ իշխաններուն յանդգնութիւնը պատճառաւ. նոյնպէս նաև Բերիոյ ամիրային ալ յաղթեց, ուսկից շատ աւար առաւ ու անոր իրմէ պահանջած հարկը՝ ինքը անկէ առաւ։

Հ. Լևոն Բ, ո՞րչափ տուն թագաւորեց.

Պ. Երեսունըչորս տարի. ու բարի ա-նուամբ մեռաւ։

Հ. Լևոն Բ-ին տեղը ո՞վ անցաւ.

Պ. Մանչ տղայ չունենալով Զապել անունով աղջիկը տեղը անցաւ։ Իշխանները միացան ու Զապէլը Փիլիպոս անունով Լատինի մը հետ կարգեցին որ մօր կողմանէ միայն Հայ էր. ասիկայ երկու տարի իշխելէն ետքը սկսաւ Սսոյ հարստութիւնները Անտիոք կրել. ասոնք բանիս բարկանալով իշխանները բանտը դրին զինքը ուր որ մեռաւ քիչ տուներէն։

Հ. Փիլիպոսին տեղը ո՞վ յաջորդեց.

Պ. Հեթում Ա., որ Զապելին հետ կար գուելով ինքը թագաւոր եղաւ ու շատ զարգարեց Հայաստանը։

Հ. Ինչու՞ համար Հեթում թաղիարաց Մանգոյ խանին գնաց.

Պ. Տեսնելով որ թաղիարները շատ չարիք կը հասցնեն Հայաստանի, ու կրնան նաև իր երկրին վրայ ալ գալ, եկաւ թաղիարատան գնաց որպէս զի խանին ազաչէ որ ետաւ չքնեն Հայոց։ Մանգոյ խանը սիրով ընդունեցաւ զինքը և խնդիրքը կատարեց։

Հ. Հեթում թաղիարատանէն դառնալէն ետքը ինչ պատերազմներ ըրաւ.

Պ. Իկոնիոյ ամիրան վրան նախանձելով պատերազմի եկաւ, բայց յաղթուեցաւ։ Նոյնպէս նաև Կոստանդին Լամբրոնին իշխանը ապստամբելով Իկոնիոյ ամիրային հետ միաբանած վրան պատերազմի եկաւ. բայց երկուքն ալ յաղթուեցան։

Հ. Հեթում վերի ըսած թշնամիներէն զատ ուրիշ ինչ նոր թշնամի ունեցաւ.

Պ. Փնտուխտար Եգիպտոսի ամիրան, որ Սկիւթացւոց և ուրիշ շատերուն յաղթեցէն ետքը, գերապան խրկեց Հեթումին որ Եգիպտացւոցմէ առած քաղաքները ետ տայ. Հեթում յանձ չառաւ առ բանս ու իր երկու որդիքը Լեւոն և Թորոս թողով անոր գէմ, ինքը գնաց որ թաղիարներէն օգնութիւն առնէ։

Հ. Թորոս և Լևոն կրցան փնտռելու բին յարմիլ.

Պ. Թորոս պատերազմի մէջ մեռաւ, Լևոնն ալ գերի ինկաւ. ասով բոլոր եր կիրը թշնամիներէն կոխկռտուեցաւ:

Հ. Հեթում ետ գառնալով ինչպէս գըտաւ Կիլիկիան.

Պ. Ամէն բան տակն ու վրայ ու աւերակ դարձած. և տեսնելով որ դարմանն չկայ ետ Համիսոյ վարձուորը զրկեցը, ու ապաշանգով և շատ տակ տալով Լևոնը գերութենէ ազատեց:

Հ. Լևոնին գառնալէն ետքը, գեռ որչափ տարի ալ Թագաւորեց Հեթում.

Պ. Քիչ մը առնելէն Լևոն որդւոյն յանձնեց Թագաւորութիւնը ու ինքը Դրապարկ վանքը քաշուելով բարի մահուամբ մեռաւ քառասունը մարի թագրելէն ետքը:

Հ. Լևոն Դ., ինչպիսի մարդ էր.

Պ. Խոհեմ, բարեպաշտ և ուսումնասէր որով մեկէն սկսաւ դպրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցնել, որպէս զի ոգիտութիւն, նախանձու, տգիտութիւն և փառասիրութիւն անիծեալ շառաւիղները հոգին. բայց ասիսոս ինչպէս որ կ'ուզէր վախճանին չհասաւ (1269):

Հ. Ի՞նչ արդեօք եղաւ որ Լևոն մեռաւ դրածը չկրցաւ առաջ տանիլ.

Պ. Իշխանները ոմանք հետը թշնամանալով գացին Փնտուխտարը Լեռնին գէմ գրգռեցին. ան ալ անհիս բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկաւ. Լեռն անոգնական մնալով փախաւ պահուըտեցաւ, որով թշնամին ամէն ջարդը հասուցին։

Հ. Լեռն տեսնելով Կիլիկիոյ աւերմունքը ի՞նչ ըրաւ.

Պ. Երբ պահուըտած տեղէն ուրիշ մը զօրք ժողվելով Սմբատ եղբօրը հետ միացած վռնտեց Եգիպտացիները, ու յաղթեց նաև Իկոնիոյ ամիրային։ Տասներեքնը տարի թագաւորելէն ետքը մեռաւ։

ԴԱՍ ԻԳ.

ՀԵԹՈՒՄ ԷՐԷՐՈՐԴԷՆ ԻՆՐՈՒՆ ՈՒՐԻՆԷՆՑ ԹԱԳԱՒՈՐԵԼԷՆ ԿՈՐԾԱՆԻԼԸ։

Հ. Հեթում Բ. ինչո՞ւ թագաւոր ջնծուեցաւ.

Պ. Վասն զի սատանի կրօնասէր ու բարեպաշտ ըլլալով, չէր ուզեր արտաքին բանեբու խառնուիլ. անոր համար ալ ջրոս տարի իշխելէն ետքը վանք մը քաշուեցաւ ու Թորոս եղբայրը թագաւորեցուց (1293)։

Հ. Թորոս Դ., ո՞ր շրջանն է թագաւորեց.

Պ. Իրեք տարիէն թագաւորութիւնը ձրդեց ու ինքն ալ վանք մը քաշուեցաւ, տեսնելով որ նորէն Հեթումը գայ թագաւորէ։

Հ. Այս միջոցներուն ինչ խռովութիւն եղաւ Կիլիկիոյ մէջ.

Պ. Մարիամ կայսրուհիին աղաչանքովը (որ իրենց քոյրն էր) Հեթում ու Թորոս Ստամպոլ գացին. ան միջոցին Սմբատ մէկալ եղբայրներին՝ իշխանները համոզելով ինքը թագաւոր օծուեցաւ. ու երբոր անոնք կը գառնային գէմերնին ելլելով երկուքն ալ բռնեց. Հեթումը կուրցուց ու Թորոսը ապաներեց:

Հ. Սմբատ կրցա՞ւ հանգիստ թագաւորել.

Պ. Չէ. վասն զի Կոստանդին մէկալ եղբայրներն աս բանիս վրայ բարկանալով, շատ զօրքով Սմբատին վրայ եկաւ ու յաղթելով անոր՝ բռնեց զանիկայ ու բանտ դրաւ, և ինքը անոր տեղը թագաւորեց: Հեթումն ալ բանտէն հանուած հանգիստ կը պահէր:

Հ. Կոստանդին Բ. որչափ տարի թագաւորեց.

Պ. Երկու տարիի չափ. վասն զի երբոր հրաշքով մը Հեթումին աչքերը բացուեցան, ամէնքը սկսան ուզել որ նորէն Հեթում թագաւորէ. բայց երբոր Կոստանդին աս բանիս վրայ սկսաւ խռովութիւն հանել, Հեթում ալ բռնեց զինքը և Սմբատն ալ մէկտեղ Ստամպոլ խաւրեց:

Հ. Հեթում Բ. երբորդ անգամ թագաւորելով ինչ ըրաւ.

Պ. Ան և այլ անգամ Եգիպտացւոց ու Լիկայոնացւոց յաղթելէն վերջը, Թորոս

եղբօրը տղան Լեւոնը իր տեղը թագաւորեցուց ու ինքը նորէն առանձնացաւ վանքը. բայց միշտ խորհրդով կ'օգնէր Լեւոն Դ-ին, որն որ խելացի ու բարեպաշտ էր։

Հ. Լեւոն Դ-ին առնելը ի՞նչ նոր խռովութիւն բերաւ Կիլիկիոյ մէջ.

Պ. Լեւոն Դ., Գրիգոր Աղնաւարզեցի կաթուղիկոսին յորդորելովը Սսոյ մէջ եկեղեցական ժողովք մը ընել տուաւ, որուն մէջը շատ բան փոխեցին ծէսերու վերաբերեալ. խել մը խռովարար ու անկարգ մարդիկ առ բանիս վրայ բարկացած մեծամեծ խռովութիւններ հանեցին Կիլիկիոյ մէջ, ու առանք ալ բաւական չսեպելով, անզգամութեամբ գացին Թաթարաց Պիլղար իշխանը որ Աղնարզաբա կը նստէր Լեւոնին դէմ գրգռեցին։

Հ. Պիլղար ի՞նչ շարժք հասուց Լեւոնին.

Պ. Խարդախութեամբ Լեւոնը իրեն կանչեց, իբրև թէ խորհուրդ հարցնելու համար. ան ալ շատ իշխաններով ու հեթուն ալ մէկտեղ եկաւ գնաց. Պիլղար նախ սիրով ընդունեցաւ ու վերջը զամէնքն ալ թրէ անցուց (1308)։

Հ. Լեւոն Դ-ին ոմ յաջորդեց.

Պ. Օշին հեթումին եղբայրը շատ զօրք ժողված՝ Պիլղարին զօրքերը ցրուեց փախուց ու ինքը թագաւոր եղաւ, ասիպելով որ Սսոյ ժողովքին կանոնները պահէն։ Օշին

գրեթէ սատանայնոր հրաշքով մը Նոյը Եղիպտոսի սիրայնոր ալ յաղթեց որ շատ զօրքով վրան եկեր էր. սատանէրիս տարի թագաւորեց ու քան մահուանը մեռաւ։

Հ. Լեռն Ե, իր հօրը տեղը յաջորդելով ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ։

Պ. Թուրինեանց թագաւորներուն մէջ գրեթէ ամենէն ուժգին անգութ և անկարգ կեանք անցնողը ինքը եղաւ, որով իր կինը, եղբայրը ու Օշին Պայլ փեսան սպաննել տուաւ անիրաւութեամբ։

Հ. Լեռն Ե ինչ տեսակ օտար թշնամիները ինչ շարքը հասուցին Կիլիկիոյ.

Պ. Եղիպտոսի Սուլթանը, թաթարներն ու թուրքերը շատ անգամ Կիլիկիոյ վրայ վազելով շատ չարիներ հասուցին, միշտ պատճառ բերելով որ Հայերը Լատինացոյ հետ թղթակցութիւն ու վերաբերութիւն ունին ու զանոնք կը գրգռեն Եղուսաղէմի վրայ գալու։

Հ. Լեռն Ե, ո՞ր քանի տարի թագաւորեց.

Պ. Քսանչորսի տարի. շատ անհանգիստ ու խեղճ կեանքով։

Հ. Ո՞վ յաջորդեց Լեռն Ե ին.

Պ. Յովհաննէս Պայլ ազգաւ Լատին. ասիկոյ տարին մը սպաննուեցաւ իշխանները ին իր հայատեցութեանը համար։

Հ. Յովհաննեսին ով յաջորդեց.

Պ. Եղբայրը Գուիոն՝ որ երկու տարի ապաներուեցաւ Լատին ծէս ազգին մէջ խոնարհ ուղղութեան համար։

Հ. Կոստանդին Գուիոնին տեղը յաջորդելով, ինչ հանգոյց բռնեց.

Պ. Թէպէտ և ազգաւ Լատին էր, բայց խելքով կառավարեց ազգը տասնչորս տարի։ Նոյնպէս տարբ տանին ալ Եգիպտոսի տիրան շատ զօրքով Կիլիկիոյ վրայ եկաւ. բայց ջարդուեցաւ Կոստանդինէն։

Հ. Լեւոն Զ. ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Երկու տարի աթոռը առանց թագաւորի մնալէն վերջը իշխանները փառասիրութիւնը համար, ընտրուեցաւ թագաւոր Լեւոն Զ., որուն մայրը միայն Հայ էր. խելացի ու բարեպաշտ ըլլալով շատ լաւ պիտի կառավարէր ազգը, բայց ափսոս ժամանակին պարագաները չթողուցին (1365)։

Հ. Ռուբինեանց թագաւորութիւնը ինչ պէս կործանեցաւ.

Պ. Լեւոն տասնչորսերորդ տարուան թագաւորութեան մէջ շատ անգամ Եգիպտացիներէն յաղթուելէն վերջը, Եգիպտոսի Սուլթանը Էշրէֆ Շաբան անհամար զօրքով վրան եկաւ ու երկար առնելէն պատերազմելէն ետքը բռնեց Լեւոնը ու շղթայի զարնելով Եգիպտոս տարաւ, որով վերջացաւ Հայոց թա-

գաւորութիւնը Քրիստոսի 1375 թուականին։

Հ. Լեռն Զ. ինչ եղաւ Եգիպտոս.

Պ. Եօթը տարի բանտը կեցաւ հաւատքը չուրանալուն համար. վերջը Սպանիացւոց Յովհաննէս թագաւորին ազատանքովը՝ գերութենէ ազատեցաւ ու Եւրոպա գնաց։

Հ. Լեռն գերութենէ ազատելէն ետքը ո՞ւր գնաց.

Պ. Նախ Երուսաղէմ, ուր իր ընտանիքը թողուց և ինքը անցաւ Հռոմ. վերջը Յովհաննէս Սպանիոյ թագաւորը իրեն բնակութեան տեղ տուաւ։

Հ. Ո՞ւր մեռաւ.

Պ. Փարիզ, երբոր գացեր էր հոն Համբորգութեան համար՝ մեռաւ 1393ին, Դեկեմբերի 13ին վաթսուն տարուան, ու թաղեցաւ Կերմանիեանց վանքին մէջը, ուր որ ինչուան հիմա կայ իր գերեզմանը։

ԴԱՍ ԻԴ.

Ռուբինեանց գերութեան ինչուան մեր օրերը եղած դիպուածները։

Հ. Լանկիմխուր ինչ չարիք հասուց Հայաստանի.

Պ. Ռուբինեանց թագաւորութեան կործանելէն առաջուկու տարին չարի ետքը

Լանկիմիանը Խոզակէ թամիարաց թագաւորը շատ տեղերու տիրելով Հայաստանի վրայ եկաւ, շատ տեղ այրեց աւերշոկեց ու շատ ալ արիւնհեղութիւններ ըրաւ, մանաւորապէս Սեբաստիոյ մէջ (1387)։

Հ. Ի՞նչ մարդ էր Պէյցինէ Ռուսելեան.

Պ. Քաջ և խոհեմ մարդ մը էր որ Սիւնեաց գաւառին մէջ (Խափանի կողմերը) հինգ վեց հազարի չափ Հայերու վրայ կ'իշխէր Հայրապար, ու զամէնքը կը խնամէր։

Հ. Ո՞րչափ տեղեց ասոր իշխանութիւնը.

Պ. Վրաց թագաւորը վասն նախանձելով Աշնապին անունով անզգամ և շահասէր Հայու մը ձեռքով թոյն խմցնել տուաւ ու մեռուց. թէպէտ և վերջը Աշնապին ալ չարաչար մահուամբ սպանուեցաւ (1438)։

Հ. Ի՞նչ չարիք հասուց Հայոց Շահաբաս Պարսից թագաւորը։

Պ. Սոսկալի արիւնհեղութիւններ ընելէն եռքը, հազարաւոր ընտանիք Պարսկաստան տանելով Ղոր Ջուզան շինել տուաւ ու հոն բնակեցուց. բայց առ Ճամբորդութիւն մէջը խիստ շատ մարդիկ խեղճաբար մեռան, ու ճանապարհները հասան տասուներկու հազար տուն (1604)։

Հ. Ի՞նչ գիտելիք կայ Դաւիթ Սիւնի իշխանին վրայ.

Պ. Խելացի ու կորովի մարդ ըլլալով Սիւ-

նեաց աշխարհքին կողմերը շատ զօրացաւ
ասկէ 120 տարի մը առաջ՝ իր քանի մը կրտ-
սիներովը, ու չորս տարի Տաճկերուն
դէմ պատերազմեցաւ քաջութեամբ։ Իրեն
հետն էին Մխիթար, Տէր Աւետիք և Մելիք
Բարսեղան կարմիր մարդիկը (1724)։

Հ. Դաւիթ ոչչափ առնն իշխեց.

Պ. Վէց տարի. շատ յաղթութիւններ
ընելէն եռալը մեռաւ յիսունչորս տարուան
ու իրեն յաջորդեց Մխիթար։

Հ. Մխիթարին իշխանութիւնը ոչչափ
առնն տևեց։

Պ. Խիստ քիչ. վասն զի քովի մարդիկը
զինքը ուզածնակատն ձգելով փախան ցրուե-
ցան, ու վերջը զինքն ալ ապտնեցին։ Առնց-
մէ վերջը Հայոց վրայ իրենց ազգէն իշխող
մը չէրաւ, բաց 'ի գերզերու վերակացու-
ներէն. Հայաստան ալ Պարսից և Օսման-
նեանց և վերջը Ռուսաց իշխանութեան
տակն անցաւ։ Շատ թշուառութիւններէն
ու խեղճութիւններէն վերջը հիմայ կրթու-
թեամբ, գիտութեամբ և Հայրենասէր ան-
ձանց ջանքով ազգերնիս յառաջդիմու-
թեան մէջ է։

40

2n 7115.